«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԳՐՔԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

(2-րդ դասարան)

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԳՐՔԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

(2-րդ դասարան)

ԱՐԵՎԻԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան, 2023

Դասագրքում աշխատանքը հեշտացնելու նպատակով օգտագործվել են պայմանական հետևյալ նշանները՝

Ունկնդրիր

Երգիր

Քայլիր

Նվագիր

Կատարիր վարժություն

Դիտիր

Նոտագրիր

Երգիր նոտաներով

Սովորիր

Ստեղծիր

Նկարիր

Խաղ

Հետաքրքիր է իմանալ

Հարցեր

ԱՌԱՋԱԲԱՆ

1-ին դասարանում աշակերտները «երաժշտություն» առարկայի դասերին խաղի, հեքիաթի, մուլտֆիլմերի միջոցով ծանոթացել են երաժշտական ստեղծագործությունների, մեկնաբանել դրանք և անմիջականորեն արձագանքել շրջապատող իրականության ամենատարբեր երևույթներին: Երեխայի ապրում երը, մտքերն ու խոհերը, հույզերն ու զգացմունքները իրական աշխարհի հայելին են: Կրթելով ու դաստիարակելով երեխաներին և այսպիսով բավարարելով նրանց բարոյահոգեբանական, գեղագիտական պահանջմունքները՝ ուսուցիչը դրական հույզերի առաջացմամբ նպաստավոր հող է ստեղծում երեխաների ընդհանուր և բազմակողմանի զարգացման, անձի համակողմանի ու ներդաշնակ ձևավորման համար:

Այս գործում անգնահատելի է արվեստի, հատկապես երաժշտարվեստի դերը, որի նպատակն է՝ օգնել երեխային լավատեսորեն ընկալելու շրջապատող իրականությունը, ապրելու՝ առաջնորդվելով այն ամենով, որ գեղեցիկ ու վեհ է, ակտիվ մասնակցելու գեղարվեստական արժեքների և դրանց համապատասխան չափանիշների ստեղծմանը, կարողանալու բազմակողմանի, խոր և օբյեկտիվ մտածել ու ստեղծագործել:

Տարրական դպրոցում «երաժշտություն» առարկան նպատակ ունի առաջացնելու սեր, հետաքրքրություն և հուզազգացմունքային վերաբերմունք երաժշտության նկատմամբ, ձևավորելու և զարգացնելու երաժշտական ճաշակ և երաժշտությանը հաղորդակից լինելու պահանջմունք:

Տարրական դպրոցի երաժշտական գործունեության ձևերն են՝ երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, ստեղծագործում: Սովորողները ձեռք են բերում երաժշտատեսական և երաժշտապատմական տարրական գիտելիքներ՝ նոտագրություն, ձեռքի նշաններով կատարում, կոմպոզիտորների և ստեղծագործությունների վերաբերյալ գիտելիքներ:

2-րդ դասարանի դասընթացը (32 ժամ) նպատակ ունի համակար-

գելու աշակերտների արդեն ստացած գիտելիքները: Երեխաները դասընթացը սկսում են երաժշտության պարզ ու մատչելի ժանրերի ուսում ասիրությունից՝ երգ, պար, քայլերգ (1-ին թեմա), «Ուր են մեզ տանում երաժշտության պարզ ու մատչելի ժանրերը»՝ օպերա, բալետ, սիմֆոնիա (1-ին ենթաթեմա), «Ինչպես է ստեղծվում երաժշտությունը (երաժշտական այբուբեն)» (2-րդ թեմա) և «Երաժշտության արտահայտչամիջոցներ» (1-ին ենթաթեմա):

Սիրելի՛ ուսուցիչներ, աշակերտների երաժշտական կրթության գործընթացը հարկ է սկսել նրանց հայեցի դաստիարակությամբ, ինչն առաջարկում ենք իրականացնել Կարինե Վարդումյանի «Հայոց այբուբեն» երգով[1]:

1-ին կիսամյակ, թեմա 1.
Երաժշտության պարզ և մատչելի ժանրերը

Քայլերգ

Առաջին դասարանում աշակերտները քայլերգին ծանոթանում են «Երաժշտական տնակի բնակիչներ» թեմայում, իսկ երկրորդ դասարանում սովորողներին բացատրում ենք քայլերգի տեսակները՝ զինվորական և մանկական:

Մարի Սարգսյան-Չինկեզյանի «Զինվոր»[2] երգը կատարել խրոխտ քայլքով և թմբկահարելով յուրաքանչյուր քառորդին:

Ունկնդրելով Յոհան Շտրաուս-Հոր «Ռադեցկու քայլերգը»[3] և Չայկովսկու «Անագե զինվորիկների քայլերգը»[4] «Մարդուկ-Ջարդուկ» բալետից՝ սովորողները որոշում են քայլերգի տեսակը և ներկայացնում երաժշտության բնույթը:

Քայլերգի հնչյունների ներքո քայլել՝ ձեռքերը գոտկատեղին դրած, գլուխը բարձր, վստահ: Աշակերտներին բաժանել խմբերի. մի խումբը քայլելիս ծափ կտա, մյուս խումբը կթմբկահարի: Հետևել, որ աշա-

[1] Վարդումյան Կ., Գունդիրևներ Ն. և Օ., Երգերի, երաժշտական խաղերի ընտրանի, Երևան, հեղ. հրատ., 2021:

[2] Սարգսյան-Չինկեզյան Մ., Փոքրիկ աշխարհ (երգարան), Երևան, «Անտարես» հրատ., 2020:

[3] https://www.youtube.com/watch?v=6UYklo9h3bw

[4] https://www.youtube.com/watch?v=4s6VTFMdZ8E

կերտների քայլքը, նվագը և երաժշտության ռիթմը լինեն համահունչ:

Կամիլ Սեն-Սանսի «Կենդանիների պարահանդեսից» «Առյուծի քայլերգն»[5] ունկնդրելու ժամանակ աշակերտների ուշադրությունը հրավիրել կենդանիների արքայի հանդիսավոր զբոսանքին «իր թագավորությունում»:

Այնուհետև սովորողներն ունկնդրում են Էդուարդ Փաշինյանի **«Հեծյալը»**[6] մանրանվագը, որի հնչյունների ներքո հորինում են ռիթմական նվագակցություն: Ստորև ներկայացնում ենք ռիթմական նվագակցության օրինակ:



[5] https://www.youtube.com/watch?v=f_Yc8lF83N0

[6] Սարաջյան Գ., Ումր-Շատ Վ., Դաշնամուրի ձեռնարկ. I և II մասեր: Խմբա- գիր՝ Գ. Բուդաղյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1973, 1978:

Էդուարդ Փաշինյանի **«Հեծյալը»** մանրանվագից հատված ունկնդրելիս կատարել ռիթմական վարժություն:




16
16
f
21
21
p
27
27
f



Նախապատրաստական դիրք՝ ձեռքերը գոտկատեղին դրած, ոտքերը միմյանցից փոքր-ինչ հեռու:

1-ին տակտ՝ 2 քայլ տեղում

2-րդ տակտ՝ 2 քայլ տեղում

3-րդ տակտ՝ 2 թռիչք տեղում

4-րդ տակտ՝ 2 թռիչք տեղում

5-8-րդ տակտեր՝ կրկնել 1-4-րդ տակտերը

9-15-րդ տակտեր՝ թեթև վազք տեղում

16-րդ տակտ՝ ծափ

Մեթոդական ուղղորդումներ: Քայլերը և թռիչքները կատարվում են յուրաքանչյուր քառորդին: Ստեղծագործության ավարտին երեխաները ծափ են տալիս, որպեսզի վազքի ընթացքում ուշադրությունը չշեղեն և երաժշտությունը լսեն մինչև վերջ:

Երգի ուսուցում: Կոմիտասի մշակմամբ **«Փայտե ձիուկ»**[7] հայկական ժողովրդական երգ[8]: Երգելիս ուշադրություն դարձնել ձայնարկությունների կատարմանը՝ տրո՛փ, պռո՛ւ, թա՛փ: Երգի կատարման ժամանակ ձիու դոփյունները վերարտադրել թմբուկներով, փայտիկներով կամ փայտե գդալներով: Որպես օրինակ ուղեցույցում ներկայացվում է փայտե գդալների և փայտիկների կատարմամբ նվագակցություն:

[7] Կոմիտաս, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1979:

[8] https://www.youtube.com/watch?v=XJGB3FdB8OI



Մեթոդական ուղղորդումներ: Փայտիկների հարվածները հիշեցնում են ձիուկի դոփյունները: Երգը կատարել ոչ արագ տեմպով, որպեսզի ութերորդականները հստակ ինչեն փայտիկների կատարմամբ:

Երգ

Առաջին դասարանում երեխաները երգել են տարբեր երգեր՝ հայկական ժողովրդական, մանկական: Աշակերտներին բացատրել երգի տեսակները, սովորեցնել հայկական ժողովրդական **«Կատակերգը»**[9], որի երաժշտության հեղինակն է Գ. Մելիքսեթյանը: **«Մեր երգն առաջին»** երգի հիման վրա բացատրել երաժշտական զարկը, տակտը, տակտերը միմյանցից անջատող տակտի գիծը, վերջավորության գծերը: Ուսուցանելով Գեղունի Չթչյանի «Մեր երգն առաջին»[10] և «Կատակերգը»՝ բացատրել կարճ և երկար տևողության հնչյունները վանկային անվանում երով՝ ♩ (թա), ♩♩

[9] Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսում ասիրություններ, հ. 10, կազմող՝ Գ.Գ. Գևորգյան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980:

[10] Յուզբաշյան Յու. Վ., Մկրտչյան Ա. Շ., Երաժշտությունն առաջին դասարանում (ուսում ամեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան, «Լույս» հրատ., 1986:

(թի-թի) և 𝅗𝅥 (թա-ա): Այսպես՝ Գեղունի Չթչյանի երգում կան կարճ և երկար հնչյուններ, իսկ «Կատակերգում» իրար հաջորդում են համաչափ հնչյուններ:

Կարճ և երկար տևողությունների մասին գիտելիքի ամրապնդման համար նախատեսված է խաղ, որտեղ զինվորիկների մոտ պետք է գտնել **թա** տևողությունը: Զինվորիկները պատկերված են Պյոտր Չայկովսկու «Մարդուկ-ջարդուկ» բալետի զինվորիկների կերպարանքով:

Գեղունի Չթչյանի **«Մեր երգն առաջին»**-ն ուսանելուց հետո երգը կատարել դափերի և մարակասների նվագակցությամբ:



Մեթոդական ուղղորդումներ: Մանկական նվագարաններն ընդգծում են տակտի ուժեղ մասերը: Սկզբում կարելի է կատարել բնական նվագարաններով՝ ծափ տալով, դոփելով կամ մատները ճտտացնելով, ապա դափի նվագակցությամբ՝ հարվածելով միայն ուժեղ մասերում (կարելի է նաև հարվածել ամբողջ երգի ռիթմական պատկերը):

Կոմպոզիտոր Ստեփան Նաղդյանի **«Վաչեի ձին»**[11] երգի հիման վրա բացատրել երաժշտական զարկը, տակտը, տակտերը միմյանցից անջատող տակտերի գծերը, վերջավորության գծերը:

«Վաչեի ձին» երգի կրկներգի ռիթմական պատկերը գրի առնելիս երևում է, որ մեկ վանկը կատարվում է երկու հնչյունով, որոնց տակ դրված է աղեղնաձև նշան: Սովորողներին բացատրել լիգայի նշանակությունը, ապա երկզարկ չափը:

Երաժշտության դասին Կոմիտասի անունը հիշատակելիս աշակերտների մեջ պետք է ձևավորել խոր ակնածանք մեր մեծ հանճարի, նրա կատարած հսկայական աշխատանքի և սերունդներին թողած ազգային ժառանգության նկատմամբ: Բանաստեղծ Պարույր Սևակը Կոմիտասին անվանում է «հայ երգի Մեսրոպ Մաշտոց»՝ դիպուկ բնութագրելով մշակութային այն բեկումը, որն առաջացրել են երկու մեծ հանճարները՝ Մեսրոպ Մաշտոցն ու Կոմիտասը:

Տեղին է հիշել մեծն Կոմիտասի աշակերտ Միհրան Թումաճանի բնութագրում իր ուսուցչի մասին. «Հայ երգի դարավոր ակունքեն քաղված ու մաքրված այս երգերուն մեջեն Կոմիտասի մեծահիրաշ «Խորհուրդը» կսավառներ օդին մեջ: Այդ մանուկներու խանդավառ դեմքերը դիտած պահուս ինծի կթվեր, թե անոնց բոսորագույն այտերուն վրա գարնանային բազմագեղ ծաղիկներ ծիլ կարձակեին... Մեր մանուկներուն մանկական հոգիներուն մեջ կցանե սերմեր, որոնք, վստահ եմ, հունձք պիտի տան կրկնապատիկ, եռապատիկ, նույնիսկ՝ հարյուրապատիկ»[12]:

---

[11] Արտուտիկ (մանկական երգեր), կազմող՝ Վ. Վարդանյան, Երևան, «Արևիկ» հրատ., 1988:

[12] Կոմիտաս, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1979, էջ13:

Երեխաներին ծանոթացնելով հնգագծին ու սոլի բանալուն՝ հիմք ենք դնում նոտագրության ուսուցմանը՝ **«Հինգ էծ ունեմ»**[13] հայկական ժողովրդական երգի[14] նոտագրությամբ: Երեխաները նոտաները սկսում են սովորել սոլից, որպեսզի հասկանան, թե ինչի համար է հնգագիծը, եթե դո նոտան գրվում է օժանդակ գծի վրա: Նոտագրությունը սկսելով սոլ նոտայից՝ աստիճանաբար իջնում են դեպի դո: Երգը նոտագրելուց հետո կատարել զանգակներով և զանգուլակներով:



Մեթոդական ուղղորդումներ: Հին ժամանակներում այծերի և ուլիկների վզից զանգակներ են կախել, որպեսզի զրնգոցից չար ոգիներն անհետանան: Իհարկե, սա կարող է մի փոքր տարօրինակ թվալ կրտսեր դպրոցական տարիքի երեխային, այդ իսկ պատճառով կարելի է պարզապես բացատրել, որ երբ այծերն ու ուլիկները փախչում էին հեռու, հովիվը զանգակի ձայնով կարողանում էր նրանց գտնել: Զանգակի ձայնը վախեցնում էր նաև գայլերին, աղվեսներին, արջերին, որոնք փորձում էին ուլիկներին բռնել: «Իլիլի, դիլիլի» ձայնարկության հետ զանգակներով և զանգուլակներով ընդգծել հին ավանդույթները:

2-րդ դասարանի դասագրքում առկա են բազմաթիվ ստեղծագործական առաջադրանքներ, որոնք կատարելիս երեխաները հորինում են երաժշտությանը համապատասխան տեքստ կամ տեքստին համապատասխան երաժշտություն: Այդպիսին է «Հինգ էծ ունեմ» երգը, որի երաժշտությունը պահպանելով սովորողները պետք է ստեղծեն նոր խոսքեր: Ստորև ներկայացնում ենք մի օրինակ.

[13] Կոմիտաս, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1969:
[14] https://www.youtube.com/watch?v=eS4-sIOMGc4

Վազվզում են, թռչկոտում, իլիլի, դիլիլի,
Նրանց հետ եմ ես խաղում, իլիլի, դիլիլի:

Պար

Աշակերտներին ներկայացնելով «պար» թեման ու դրա ենթա-տեսակները՝ հայկական և այլ ժողովուրդների պարեր՝ նպատակ ունենք ցույց տալու պարերի ազգային պատկանելությունը և ազ-գային պարերի առանձնահատկությունները:

Հայկական ժողովրդական **«Մանրիկ տերևիկ ծաղիկ»**[15] պա-րերգը կատարել թեթև, արագ տեմպով: Արագ կատարելով հան-դերձ հարկավոր է հստակ արտաբերել յուրաքանչյուր վանկ: Երգը յուրացնելուց հետո սովորել պարերգի շարժում երը:

Նախապատրաստական դիրք՝ աշակերտներն ուսուցչի հետ շուրջպար են բռնում:

1-ին տակտ՝ 1-ին զարկ՝ աջ ոտքը տանել աջ, 4-րդ զարկ՝ ձախը միացնել աջին

2-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ աջ ոտքը տանել աջ, 4-րդ զարկ՝ ձախը մոտեցնել աջին և կրնկի վրա դնել առջևում

3-4-րդ տակտեր՝ կրկնել 1-4-րդ տակտերը ձախ ոտքով դեպի ձախ

5-8-րդ տակտեր՝ կրկնել 1-4-րդ տակտերը

9-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ աջ ոտքը տանել առաջ, 4-րդ զարկ՝ ձախ ոտքը տանել առաջ

10-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ աջ ոտքը տանել առաջ, 4-րդ զարկ՝ ձախը մոտեցնել աջին և կրնկի վրա դնել առջևում

11-12-րդ տակտեր՝ կրկնել 9-10-րդ տակտերը ձախ ոտքով հետ գնալով

13-16-րդ տակտեր՝ կրկնել 9-12-րդ տակտերը

Մեթոդական ուղղորդումներ: Շրջան կազմելիս այնպես կանգնել, որ ոտքը դեպի աջ և ձախ տանելու ժամանակ աշակերտ-

[15] Մանկական երգարան. պարերգ. առաջին տասնյակ, գրառող, բանահյուսական-բանաստեղծական տեքստը մանկական տարիքի համար փոխադրող և կազմող՝ Արուսյակ Սահակյան, Երևան, «Նորք գրատուն» հրատ., 2003 – 23 էջ :

ների ոտքերը չդիպչեն միմյանց: Քայլերը պետք է լինեն փոքր և համաչափ: Առաջ գնալու ժամանակ, երբ շրջանը նեղանում է, հարկավոր է չիրել միմյանց: Եթե դասասենյակում տարածքը փոքր է, ապա կարելի է գրատախտակի մոտ շուրջպար կազմել շարքերով նստած աշակերտների հետ: Կարելի է նաև մեծ շուրջպար բռնել մեջտեղի նստարանի շուրջ (այս դեպքում պետք է շատ փոքր քայլերով գնալ առաջ):

Պարերգը կատարել նաև դափի նվագակցությամբ:

«Մանրիկ տերևիկ ծաղիկ» պարերգը սովորելուց հետո աշակերտներն ունկնդրում են հայկական ժողովրդական **«Շուշիկի»** մենապարը[16] Կոմիտասի մշակմամբ:

Որպես պարի տեսակ ներկայացված են պարահանդեսային պարերը, մասնավորապես՝ վալսը: Սովորողներն ուսում ասիրում են «Վալսերի արքա» Յոհան Շտրաուս-Որդու ստեղծագործական դիմանկարը, ունկնդրում նրա «Երկնագույն Դանուբի վրա» վալսը և դիտում այդ վալսի հիման վրա նկարահանված «Երկնագույն Դանուբ» մուլտֆիլմը[17]:

[16] https://www.youtube.com/watch?v=jHwy6_ZU4YA

[17] https://www.youtube.com/watch?v=3zCc3_GrDoM

1-ին կիսամյակ, ենթաթեմա 1
Ո՞ւր են մեզ տանում երաժշտության պարզ ու մատչելի ժանրերը

Ծանոթացումը երաժշտության պարզ տեսակներին աշակերտներին հնարավորություն է տալիս ծանոթանալու նաև երաժշտական մեծակտավ տեսակներին ու ժանրերին՝ օպերային, բալետին, սիմֆոնիային: Ծանոթացումը սկսելով մանկական օպերայից և բալետից՝ ընդգծում ենք մասնավորապես, հայ կոմպոզիտորների մեծ ուշադրությունը երեխաների յուրահատուկ և ինքնատիպ աշխարհի նկատմամբ:

Օպերա

Սովորողներին ներկայացնում ենք Ազատ Մանուկյանի «Չարի վերջը» մանկական օպերան ըստ Հովհաննես Թումանյանի համանուն հեքիաթ-առակի: «Չարի վերջը» օպերայի բովանդակությունը աշակերտներն ընթերցում են, նկարում «Չարի վերջը» հեքիաթ-առակի որևէ հերոսի և մեկնաբանում, թե ինչու են ընտրել այդ հերոսին (կարելի է համատեղել մայրենիի ժամին հեքիաթ-առակի ընթերցման և կերպարվեստի ժամին հեքիաթ-առակի հերոսներին նկարելու հետ կամ պարզապես երաժշտության ժամին ընթերցել և նկարել): Այսպիսով՝ ստեղծվում են միջառարկայական կապեր:

«Չարի վերջը» օպերայից **«Թռչունների երգը»** կատարել դերերով՝ հանդես գալով աղավ ու, կաչաղակի և մյուս թռչունների անունից:

Առաջարկում ենք նաև օպերայի դիտում ամբողջությամբ որպես արտադասարանական պարապմունք[18]:

Բալետ

Սովորողները բալետային արվեստին ծանոթանում են Տիգրան Մանսուրյանի «Զյունե թագուհին» բալետի միջոցով: Տիգրան Մանսուրյանի ստեղծագործական դիմանկարին ծանոթանալուց

[18] https://www.youtube.com/watch?v=lCELgVxDrCI

հետո սովորողներին ներկայացվում է բալետի հակիրճ բովանդակությունը, այնուհետև բալետից ունկնդրում են «Ձյունե թագուհու թագավորությունը» և «Մենուետ» հատվածները: Բալետից հատվածներ ունկնդրելու ժամանակ աշակերտների երևակայությունը պետք է ուղղել դեպի սառցե աշխարհ (գուցե նրանցից ոմանք դիտել են մուլտֆիլմը): Կարելի է նաև հանձնարարել նկարել Ձյունե թագուհու թագավորությունը, Ձյունե թագուհուն և Կային ու Գերդային պարելիս՝ ստեղծելով միջառարկայական կապ երաժշտության և կերպարվեստի միջև: Որպես արտադասարանական աշխատանք կարելի է դիտել մուլտֆիլմը[19]՝

Թեմայի ավարտին ներկայացվում է **«Շղթա»** խաղը որպես ամփոփում: Խաղի նպատակն է կրկնել տվյալ թեմայի շրջանակներում իրենց անցած եզրույթները, ստեղծագործությունները և նրանց հեղինակների անունները:

Խաղի բովանդակությունը: Աշակերտներն ուսուցչի հետ կանգնում են շրջանաձև: Ուսուցիչն իր ձեռքում ունի ինչ-որ խաղալիք կամ իր (գնդակ, խորանարդ, կենդանու կերպարանքով փափուկ խաղալիք, գրչատուփ և այլն): Ուսուցիչն անվանում է դասի թեման և իր ձեռքի առարկան փոխանցում ձախ կողմի աշակերտին: Այդ աշակերտն անվանում է թեմայի վերաբերյալ որևէ եզրույթ կամ անվանում և առարկան փոխանցում իր ձախ կողմում գտնվող աշակերտին: Նպատակահարմար է շղթան «պտտվի» ժամացույցի սլաքի ուղղությամբ: Ով չի կարողանում անվանել, շրջանից դուրս է գալիս:

Մեթոդական ուղղորդումներ: Սովորողները պետք է ուշադիր լսեն իրենց համադասարանցիների պատասխանները, որպեսզի չկրկնեն նրանց անվանած եզրույթները: Խաղի ողջ ընթացքում պետք է պահպանել շրջանաձև գիծը, միմյանց նկատմամբ դրսևորեն հանդուրժողականություն, հարգանք, մեկը մյուսին չընդհատեն և չմիջամտեն:

Նոտագրության բաժնում ուսուցանվող հնգագիծը և դո, ռե, մի, ֆա, սոլ նոտաները հնարավորություն են տալիս գրառելու արդեն

[19] https://www.youtube.com/watch?v=a9EMZitlNn8:

ծանոթ մանկական երգերը կամ դրանց հատվածները:

Որպես ստեղծագործական աշխատանք ներկայացված է տրված օրինակում շարունակել բաց թողնված տակտերը՝ ստեղծելով երաժշտական հատված: Այս առաջադրանքը միտված է զարգացնել երեխաների երաժշտական մտածողությունը, ներքին լսողությունը և ստեղծագործական երևակայությունը:

Սիմֆոնիա

Սովորողներին ներկայացնում ենք սիմֆոնիա ժանրը, սիմֆոնիկ նվագախումբը՝ որպես սիմֆոնիան կատարող, և դիրիժորին: Հայ կոմպոզիտորների մեծակտավ ստեղծագործություններից բացի՝ ներկայացված են դասական սիմֆոնիայի հիմ ադիրներից մեկի՝ Յոզեֆ Հայդնի սիմֆոնիաներից հատվածներ ունկնդրման համար, ինչը կընդլայնի երեխաների գիտելիքներն այս թեմայով:

«Մանկական» սիմֆոնիան ունկնդրելիս սովորողների ուշադրությունը հրավիրել այն նվագարանների նկարներին, որոնք կիրառվել են նվագախմբի ավանդական նվագարանների հետ միասին (այս սիմֆոնիայի հեղինակի վերաբերյալ տեղեկությունը հավաստի չէ. այն վերագրվում է Յոզեֆ Հայդնին կամ Լեոպոլդ Մոցարտին՝ Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի հորը): Դիտել «Հայդնի «Մանկական սիմֆոնիան»» մուլտֆիլմը, որը նկարահանվել է այդ սիմֆոնիայի երաժշտության հիման վրա:

Յոզեֆ Հայդնի Օքսֆորդյան սիմֆոնիայից հատվածի ներքո կազմակերպել «Շրջան» խաղը:

Շրջան

Հատված Օքսֆորդյան սիմֆոնիայից

Յ. Հայդն





Խաղի նպատակ: Ուշադիր լսել, թե երբ է կրկնվում երաժշտությունը հակառակ ուղղությամբ շարժվելու համար Կարողանալ տարբերել ձայնասահմանները (ռեգիստրները)[20]:

Խաղի ընթացք: Երեխաները շրջան կազմած պտտվում են դեպի աջ, ապա երաժշտության կրկնության հետ՝ դեպի ձախ: Երաժշտության դադարի ժամանակ կանգնում են: Երբ հնչում են ութերորդականներն ու քառորդը միջին ռեգիստրում, ծափ են տալիս համապատասխան ռիթմական պատկերը: Երբ նույն ռիթմական պատկերը հնչում է ստորին ռեգիստրում, դոփում են:

Մեթոդական ուղղորդումներ: Հետևել, որ երեխաները շրջանով պտտվելիս մեջքն ուղիղ պահեն, միմյանց չհրեն, պահպանեն շրջանի ձևը: Շրջանի ուղղության փոփոխությունն աջից ձախ պետք է կատարվի սահուն: Ճիշտ կատարել միջին և ստորին ռեգիստրներում հնչող ռիթմական պատկերը՝ համապատասխանաբար ծափ տալով և դոփելով: Կարելի է մեծ շրջան բռնել մեջտեղի նստարանի շուրջ կամ մի քանի հոգով՝ գրատախտակի մոտ:

Ուսուցանվում է Ազատ Մանուկյանի «Չարի վերջը» օպերայից ևս մեկ երգ՝ քաջ շնիկին բնութագրող **«Հաֆ, հաֆ»**[21]-ը, որից հետո սովորողները կարող են բնութագրել իրար հակադիր կերպարները[22]:

Նոտագրելով հայկական ժողովրդական «Դան, դան, դանեդան» երգը՝ սովորողները պետք է ստեղծեն նոր խոսքեր՝ պահպանելով երաժշտությունը: 1-ին կիսամյակն ամփոփում ենք Մարի Սարգսյան-Չինկեզյանի **«Ձյուն է, ձյուն»**[23] երգով:

---

[20] Գևորգյան Ա., Ռիթմիկա (մեթոդական ձեռնարկ), Երևան, «Մեկնարկ» հրատ., 2022:

[21] Մանուկյան Ա., Չարի վերջը (մանկական օպերա), Երևան, 1958:

[22] https://www.youtube.com/watch?v=lCELgVxDrCI

[23] Սարգսյան-Չինկեզյան Մ., Փոքրիկ աշխարհ (երգարան), Երևան, «Անտարես» հրատ., 2020:

2-րդ կիսամյակ, թեմա 1
Ինչպես է ստեղծվում երաժշտությունը (երաժշտական այբուբեն)

Որպեսզի սովորողները ճիշտ ըմբռնեն, թե ինչպես է ստեղծվում երաժշտությունը, այս թեմայում ներկայացված է հեքիաթ մի թագավորության մասին, որի թագուհին Երաժշտությունն է, իսկ բնակիչները՝ երաժշտական այբուբենը և երաժշտական արտահայտչամիջոցները:

Երաժշտական այբուբենը պարզ և մատչելի ներկայացնելու համար աշակերտները նախ ունկնդրում են Մարթեն Յորգանցի **«Այբ, բեն, գիմ»** երգը հեղինակի կատարմամբ և դիտում Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբեն» նկարը, որի կենտրոնում գրերի ստեղծմանը մեծապես աջակցած կաթողիկոս Սահակ Պարթևն է՝ հայատառ մագաղաթը ձեռքին:

Աշակերտներին հանձնարարվում է ստեղծել հայոց այբուբենին նվիրված քառատող երգ:

Դասագրքում նաև ներկայացված է 18-րդ դարի իտալացի գեղանկարիչ Ֆրանչեսկո Մաջիոտոյի «Մեսրոպ Մաշտոց» նկարը:

Սովորողներն ունկնդրում են Արեգ Լուսինյանի **«Երաժշտական այբուբեն»** երգը[24], ապա սովորում Հրաչյա Օհանյանի հեղինակած **«Հնչյունաշար»**[25] երգը: Նոտագրելով առաջին օկտավի լա, սի և երկրորդ օկտավի դո նոտաները՝ աշակերտները յուրացնում են դո հնչյունաշարը և նոտաներով երգում «Հնչյունաշար» երգի առաջին տունը: Սովորաբար 7 նոտան համեմատում են ծիածանի 7 գույնի հետ: Այդ համեմատությունն օգնում է երեխաներին մտապահելու նոտաների հերթականությունը: Ծանոթանալով ձեռքի նշաններին՝ սովորում են կատարել իրենց ծանոթ երգերը ձեռքի նշաններով՝ նպաստելով նրանց լսողության և լադային մտածողության զարգացմանը: Որպես օրինակ ձեռքի նշաններով աշակերտները երգում են «Հնչյունաշար» երգի առաջին տունը:

---

[24] https://www.youtube.com/watch?v=jlkZRsRkCrQ

[25] Օհանյան Հ., Դպրոցական երգեր (դաշնամուրի նվագակցությամբ), Երևան, «Լույս» հրատ., 1975:

Ուսումասիրելով Ռոբերտ Պետրոսյանի կյանքը՝ աշակերտներն ունկնդրում են հայկական ժողովրդական «Հացթուխ» երգը «Արևիկ» մանկական վոկալ-նվագարանային համույթի կատարմամբ, քանի որ Ռ. Պետրոսյանը «Արևիկ»-ի հիմ ադիրն է: Ապա կատարում են ստեղծագործական աշխատանք. տրված խոսքերով ստեղծում են երգ: Աշակերտներն արդեն յուրացրել են դո հնչյունաշարը, և երգի երաժշտությունը պետք է գրվի է դո հնչյունաշարի սահմաններում: Օրինակ՝

Գնանք դաշտի հողը վարենք,
Ցորեն ցանենք:

Հասկը հասնի, արևի տակ
Արտը ծփա:

Ցորեն հնձենք, ալյուր աղանք,
Լավաշ թխենք:

Աշակերտները սովորում են **«Ձի, ձի»**[26] հայտնի բանաստեղծության հիման վրա գրված **«Իմ ձին»** երգը, որի միջոցով բացատրում ենք «մեղեդի» հասկացությունը: Աշակերտները նոտագրում են երգի մեղեդուց հատված և նոտաներով ու ձեռքի նշաններով կատարում այդ հատվածը: Այնուհետև ստեղծում են ռիթմական նվագակցություն բնական նվագարաններով:

Տարրական դասարանների ունկնդրման նյութի ընտրությունը պայմանավորված է այդ տարիքի երեխաների հետաքրքրություններով և երեխաներին շրջապատող միջավայրով: Առավել հոգեհարազատ է դառնում ծրագրային երաժշտությունը, որտեղ կոմպոզիտորների առաջարկած ծրագիրը նպաստում է երաժշտաստեղծագործական երևակայության ձևավորմանն ու զարգացմանը, երաժշտական կերպարը բնութագրելու կարողությանը: Ռուս կոմպոզիտոր Պյոտր Չայկովսկին իր դաշնամուրային մանրանվագներում անդրադարձել է ծրագրային երաժշտությանը՝ դրանք ներկայացնելով դաշնա-

[26] Բզեզը (մանկական երգեր դաշնամուրի նվագակցությամբ), Երևան, «Հայաստան» հրատ., 1974:

մուրային շարքերում, որոնցից է «Տարվա եղանակները»: Որպես ունկնդրում ներկայացված է **«Ապրիլ (ձնծաղիկ)»** մանրանվագը[27] «Տարվա եղանակներ» շարքից: Մանրանվագի բնույթի ներկայացմանը զուգահեռ ուսում ասիրվում է նաև Չայկովսկու կյանքը:

Ըստ տարվա եղանակի երեխաները սովորում են հայկական ժողովրդական **«Ա՛խ, գարո՛ւն է, գարո՛ւն է»**[28] պարերգը[29] և դիտում Մարտիրոս Սարյանի «Արարատը գարնանը» նկարը: Պարերգը երգելիս կատարում են համապատասխան շարժում եր: Ստորև ներկայացվում է շուրջպարի օրինակ:

Նախապատրաստական դիրք՝ շրջան կազմել՝ ճկույթներով իրար բռնած, ոտքերը միասին:

1-ին տակտ՝ 1-ին զարկ՝ աջ ոտքը տանել աջ, 2-րդ զարկ՝ ձախը միացնել աջին

2-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ աջ ոտքը տանել աջ, 2-րդ զարկ՝ ձախը մոտեցնել աջին և դնել առջևում ոտնաթաթի վրա

3-րդ տակտ՝ ձախ ոտքը տանել նախապատրաստական դիրք, աջը դնել առջևում ոտնաթաթի վրա

4-6-րդ տակտեր՝ կրկնել 1-3-րդ տակտերը

7-12-րդ տակտերը՝ կրկնել 1-6-րդ տակտերը

13-18-րդ տակտեր՝ կրկնել 1-6-րդ տակտերը՝ առաջ գալով դեպի շրջանի ներս

19-24-րդ տակտեր՝ կրկնել 13-18-րդ տակտերը՝ դեպի հետ գնալով՝ շրջանը բացելով

25-30-րդ տակտեր՝ կրկնել 1-6-րդ տակտերը՝ ձախ ոտքով դեպի ձախ գնալով

31-42-րդ տակտեր՝ կրկնել 13-24-րդ տակտերը

Մեթոդական ուղղորդումներ: Պարերգը կարելի է պարել նաև զույգերով՝ մեկ տղա և մեկ աղջիկ, որոնք այնպես պետք է կանգնեն, որ պահպանվի շրջանի տեսքը:

---

[27] https://www.youtube.com/watch?v=KdwvQbgJbQI

[28] Մանկական երգարան. պարերգ. առաջին տասնյակ, գրառող, բանահյուսական-բանաստեղծական տեքստը մանկական տարիքի համար փոխադրող և կազմող՝ Արուսյակ Սահակյան, Երևան, «Նորք գրատուն» հրատ., 2003 – 23 էջ :

[29] https://youtu.be/lUgoS1b_t6Y

Պարերգը հիմ ատող-կրկնակ է, որտեղ կրկնակը 10-վանկանի է, իսկ խաղիկները՝ 7-վանկանի: Որպեսզի խաղիկն իր 7 վանկը դարձնի 10 վանկ, կրկնակից փոխ է առնում 3 վանկ՝ «գա-րու-ն է», որոնք երգում են խաղիկի յուրաքանչյուր տողի վերջում:

Հիմ ատող-կրկնակը սկզբում երգում է աղջիկների խումբը, հետո՝ տղաների խումբը: Երկտող առաջին խաղիկը՝ «Սարերը ման եմ եկել…», երգում է տղաների խումբը և շարունակում երգել հիմնատող-կրկնակը: Երկտող երկրորդ խաղիկը՝ «Սարի փեշին ձնծաղիկ…», երգում է աղջիկների խումբը և շարունակում երգել հիմնատող-կրկնակը: Եվ այսպես մինչև վերջ:

Պարերգը կատարելիս աշակերտները պետք է հորինեն նվագարանային ուղեկցություն (օրինակ՝ դափով, դհոլով և այլն):

Մարտին Վարդազարյանի **«Մայրիկը, գիրքը և հայրենիքը»** երգը (խոսք՝ Սուրեն Մուրադյանի)[30] խորհրդանշական կապ է հաստատում այս երեք հասկացությունների միջև:

Մայրիկների տոնին ընդառաջ սովորում են Կարինե Վարդումյանի **«Ուրախ մայրիկ»**[31] երգը: Սովորաբար մայրերի մասին երգերում երեխաները «տեսնում են» իրենց մայրիկներին, համեմատություններ անում երգում նկարագրված մայրիկի հետ: Նաև կարելի է հարցնել երեխաներին, թե ինչպես են շնորհավորում մայրիկներին և տատիկներին մայրության տոնի առիթով:

Այնուհետև աշակերտներին հանձնարարվում է ստեղծագործական աշխատանք. տրված քառատողի համար ստեղծել մեղեդի.

Մայրս արև է՝ ես մի շող,
Մայրս անձրև է՝ ես մի ցող,
Մայրս այգի է՝ ես մի վարդ,
Երգ եմ գրում նրա համար:

Երաժշտություն թագուհու մասին հեքիաթը միտված է երեխաներին ներգրավելու երաժշտական հնչյունների կախարդական թագավորություն, որտեղ հնչում են տարբեր տրամադրության

[30] https://www.youtube.com/watch?v=nEdMFrvvCww&list=PLp8ul9DlbovkFGKslXiDOQX-fDZ86R4y2&index=4

[31] Վարդումյան Կ., Գունդիրևներ Ն. և Օ., Երգերի, երաժշտական խաղերի ընտրանի, Երևան, հեղ. հրատ., 2021:

ստեղծագործություններ՝ ուրախ, տխուր, զրնգուն, եռանդուն, նուրբ: Դասագրքում ներկայացված են 5 տրամադրություն արտահայտող երգեր: Այս երգերի մի մասն աշակերտներին արդեն ծանոթ է նախադպրոցական հաստատություններից, 1-ին դասարանի ծրագրից կամ երեխաներին շրջապատող միջավայրից: Երգերը հարկավոր է կատարել խոսքերով, նոտաներով, ինչպես նաև ձեռքի նշաններով՝ ստեղծելով համապատասխան տրամադրություն: Երգերը կարող են նաև ծառայել որպես նոտագրության նյութ: Կոմպոզիտոր Ստեփան Բաբաթորոսյանի **«Ծաղրածուն և ծաղրաձուն»**[32] երգով ավարտում ենք թագուհու տրամադրության բնութագրումը:

Աշակերտները սովորում են տարբերակել իրենց ունկնդրած ստեղծագործություններն ըստ տրամադրության: Ծանոթանում են այնպիսի հասկացությունների, ինչպիսին են մեղեդին, կրկնողության նշանը և երաժշտական դադարը՝ պաուզան: Որպես երգի ուսուցում ներկայացված է Ստեփան Նաղդյանի «Վաչեի ձին» երգը, որի կրկներգի օրինակով սովորում են երաժշտական դադարի նշանը՝ 1/4 տևողությամբ պաուզան, այնուհետև նոտագրում «Վաչեի ձին» երգի կրկներգը:

Երաժշտական մտածողության զարգացման համար առաջադրվում է ևս մեկ ստեղծագործական աշխատանք. պահպանելով «Վաչեի ձին» երգի մեղեդին, որտեղ կան երաժշտական դադարներ, շարունակի՛ր երգը:

Թեմայի ավարտին ներկայացվում է «Շղթա» խաղը որպես ամփոփում:

[32] https://www.youtube.com/watch?v=QN1nOO18lpE&list=PLp8ul9DlbovkFGKslXiDOQX-fDZ86R4y2&index=12

2-րդ կիսամյակ, ենթաթեմա
1. Երաժշտության արտահայտչամիջոցներ (հնչերանգ)

Ծանոթացումը երաժշտական արտահայտչամիջոցներին հնարավորություն է տալիս աշակերտներին ընդլայնելու իրենց ոչ միայն խոսքային, այլև երաժշտական լեզվական գիտելիքները, երաժշտական արտահայտչամիջոցները բնութագրելու, մեկնաբանելու կարողություններն ու հմտությունները: Ծանոթանում են այնպիսի հասկացությունների, ինչպիսին են տեմպը կամ ընթացքը, ուժգնության կամ դինամիկայի նշանները, լեգատո և ստակկատո կատարման առանձնահատկությունները, երգչային ձայները, նվագարանների հնչողությունը կամ հնչերանգը, նվագարանների ձայնասահմանը՝ ռեգիստրը: Դասագրքում ներկայացված է նաև երաժշտական արտահայտչամիջոցների որոշ նշանների գրառումը նոտաներում:

Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի **«Օրորոցային»**[33] ստեղծագործության միջոցով երեխաները ծանոթանում են երաժշտության դանդաղ ընթացքին: Այնուհետև սովորում են արագ տեմպում գրված Էմմա Միհրանյանի «Միշտ առույգ» երգը (խոսք՝ Լիպարիտ Սարգսյանի): Ստորև ներկայացնում ենք «Միշտ առույգ» երգի հնչյունների ներքո երաժշտառիթմական վարժությունը:

Նախապատրաստական դիրք՝ ձեռքերը գլխի տակ դրած՝ կարծես քնած են, աչքերը՝ փակ:

1-ին տակտ՝ նախապատրաստական դիրքում երգել

2-րդ տակտ՝ 2 ձեռքերը գլխավերևում լայն բացել՝ ասես արթնանում են

3-րդ տակտ՝ 2 ձեռքով դեմքը «լվանալ» առանց դեմքին դիպչելու

4-րդ տակտ՝ 4 քայլ գալ առաջ, 4-րդ քայլին ձեռքերը դնել գոտկատեղին

Կրկներգ

5-րդ տակտ՝ ցատկել տեղում 1-ին և 3-րդ զարկերին

6-րդ տակտ՝ ցատկել աջ և ձախ 1-ին և 3-րդ զարկերին

[33] https://www.youtube.com/watch?v=vXRzq_8bJ3c

7-8-րդ տակտեր՝ զույգեր կազմած պտտվել ժամասլաքի ուղղությամբ

9-10-րդ տակտեր՝ պտտվել հակառակ ուղղությամբ՝ վերջում կանգնելով իրենց տեղերում՝ ձեռքերը գոտկատեղին դրած

11-12-րդ տակտեր՝ յուրաքանչյուր կես տևողությանը մարմ ով կիսապտույտ կատարել դեպի աջ և ձախ

13-րդ տակտ՝ ձեռքով կանչել

14-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ ձեռքերը բարձրացնել՝ մատները բացելով, 2-րդ զարկ՝ ձեռքերն իջեցնել ուսերին հավասար՝ բռունցքով պահած, 3-րդ զարկ՝ կրկնել 1-ին զարկը, 4-րդ զարկ՝ ձեռքերը դնել գոտկատեղին

Կրկներգի ժամանակ շարժում երը կրկնել

Մոցարտի՝ «Դոն Ժուան» օպերայից «Մենուետ»[34] հատվածի ներքո կատարում են **«Ծաղիկների պարը»** երաժշտառիթմական վարժությունը՝ նուրբ, քնարական երաժշտությամբ փոխանցելով ծաղկի թերթիկների քնքշությունը:



[34] Գևորգյան Ա., Ռիթմիկա (մեթոդական ձեռնարկ), Երևան, «Մեկնարկ» հրատ., 2022:

Նախապատրաստական դիրք՝ ձեռքերը հանգիստ իջեցված աջ և ձախ, ոտքերն ուսերին հավասար:

1-2-րդ տակտեր՝ աջ ձեռքը կողքից բարձրացնել

3-4-րդ տակտեր՝ ձախ ձեռքը կողքից բարձրացնել

5-6-րդ տակտեր՝ 2 ձեռքը կողքից իջեցնել ուսերին հավասար

7-8-րդ տակտեր՝ 2 ձեռքը բարձրացնել

9-րդ տակտ՝ գլխավերևում 2 ձեռքը տանել աջ

10-րդ տակտ՝ 2 ձեռքը տանել ձախ

11-12-րդ տակտեր՝ կրկնել 9-10-րդ տակտերը

13-14-րդ տակտեր՝ աջ ձեռքը կողքից իջեցնել

15-16-րդ տակտեր՝ ձախ ձեռքը կողքից իջեցնել

Մեթոդական ուղղորդումներ: Շարժում երն այնպես կատարել, ասես ձեռքերը ծաղկի թերթիկներ լինեն, որոնք առավոտյան բացվում են, ձգվում դեպի արևը, միջին մասում օրորվում արևի շողերի ներքո, իսկ երեկոյան փակվում: Երաժշտության կրկնության հետ կրկնել շարժում երը, իսկ 16-րդ տակտում կատարել խոր ծնկածալում՝ ձեռքերը դնելով գլխին՝ ասես ծաղիկը փակվեց:

Ռիթմական վարժությունները կատարելուց հետո աշակերտները համեմատում են «Միշտ առույգ» երգի և Մոցարտի «Մենուետ»-ի տեմպը:

Այնուհետև երաժշտական արտահայտչամիջոցներից ներկայացվում են երաժշտության կատարման ձևերը՝ կապակցված կամ լեգատոն և անջատ կամ ստակկատոն: Լեո Դելիբի **«Պիցցիկատո»**[35]-ն վառ կերպով արտահայտում է կտրուկ, անջատ կատարումը:

Մատների մոտորիկայի զարգացման համար առաջադրանքը կատարում ենք մատները նստարանի վրա «վազեցնելով»՝ ծափերով ընդգծելով երաժշտության մեջ հանդիպող ♫♩ ռիթմը, իսկ միջին հակադիր մասում գլխավերևում հանդարտ շարժում ենք ձեռքերը՝ ընդգծելով կապակցված երաժշտությունը կամ լեգատոն: Լեգատոյի վառ արտահայտման օրինակ են օրորոցային երգերը: Գերմանացի կոմպոզիտոր Յոհաննես Բրամսի **«Օրորոցայինը»**[36]

[35] https://www.youtube.com/watch?v=uIPHZvn1Ccc

[36] Брамс И. Избранные песни для голоса с фортепьяно. Тетрадь 1 / Составитель А. Ерохин. Москва, Государственное музыкальное издательство, 1959.

կատարել կապակցված, նուրբ և հանդարտ:

«Ցատկապարան»[37] ռիթմական վարժության միջոցով ամրապնդվում են գիտելիքները երաժշտության կտրուկ, անջատ կա-



[37] Գևորգյան Ա., Ռիթմիկա (մեթոդական ձեռնարկ), մաս II, Երևան, «Մեկնարկ» հրատ., 2022:

տարման ձևի վերաբերյալ (երաժշտությունը՝ Արամ Խաչատրյանի համանուն մանրանվագի):

Նախապատրաստական դիրք՝ ձեռքերը գոտկատեղին, ոտքերը միասին:

1-ին տակտ՝ թռիչք տեղում

2-րդ տակտ՝ թռիչք տեղում

3-րդ տակտ՝ ծնկածալում

4-րդ տակտ՝ ծնկածալում

5-8-րդ տակտեր՝ կրկնել 1-4-րդ տակտերը

9-րդ տակտ՝ 2 ձեռքը գլխավերևում տանել աջ

10-րդ տակտ՝ ձեռքերը տանել ձախ

11-12-րդ տակտեր՝ կրկնել 9-10-րդ տակտերը

13-16-րդ տակտեր՝ կրկնել 9-10-րդ տակտերը՝ ձեռքերն իջեցրած, իսկ 16-րդ տակտի 3-րդ զարկին ձեռքը դնել գոտկատեղին

17-24-րդ տակտեր՝ կրկնել 1-8-րդ տակտերը

25-րդ տակտ՝ թռիչք

Մեթոդական ուղղորդումներ: Թռիչքները կատարել թեթև, իսկ միջին մասի շարժում երը՝ հանդարտ, առանց շտապելու՝ ընդգծելով երաժշտության հակադրությունն առաջին և երկրորդ մասերի միջև:

Ձայներանգին կամ տեմբրին սովորողները ծանոթանում են մարդկանց ձայների տարբերակումով: Կատարում են էստոնական ժողովրդական **«Փոքրիկներ» երգը**[38], որտեղ երկխոսություն է տեղի ունենում ուսուցչի և աշակերտների միջև: Երգում ներկայացված ընտանի կենդանիներն ունեն ձայների տարբեր երանգներ՝ տեմբրներ:

Դերային խաղ «Փոքրիկներ»

Նախապատրաստական դիրք՝ սովորողները կանգնում են շրջան կազմած, ձեռքերը բռնած:

Ուսուցիչ. «Հավաքվե՛ք, փոքրիկներ, սկսում ենք մեր խաղը»:

Պտտվել ժամասլաքի ուղղությամբ, վերջում կանգնել դեմքով

[38] https://www.youtube.com/watch?v=WW-gvG2NYQw

դեպի շրջանը և ձեռքերը բաց թողնել:

Աշակերտներ.

- Մեր շնիկը հաչում է՝ հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ:

Կրծքավանդակի մոտ ձեռքերով շնիկի թաթիկներ ցույց տալ:

- Իսկ փիսիկը մլավում՝ մյա՛ու, մյա՛ու, մյա՛ու:

Ձեռքերը հեզիկ-նազիկ շարժել այնպես, ասես փիսիկը ծառ է մագլցում:

- Խոզուկը խռխռում է՝ խը՛ռ-խը՛ռ-խը՛ռ,

3 անգամ ցուցամատով դիպչել քթի ծայրին:

- Իսկ հորթուկը մայում է՝ մո՛ւ, մո՛ւ, մո՛ւ:

Ցուցամատները ճակատի աջ և ձախ կողմերում պահել կովի կոտոշների նման և գլուխը շարժել:

Ուսուցիչ. «Սիրելի՛ փոքրիկներ, շարունակում ենք խաղը»:

Ձեռքերը բռնած՝ պտտվել ժամասլաքի ուղղությամբ, վերջում կանգնել դեմքով դեպի շրջանը և ձեռքերը բաց թողնել:

Աշակերտներ.

- Գորտերը կռկռում են՝ կը՛ռ-կը՛ռ-կը՛ռ:

Ձեռքերը պահել կոնքի երկու կողմում՝ մատները գորտի թաթերի նման բարձրացրած, և ոտնաթաթերը դեպի դուրս բացած՝ 3 անգամ կատարել ծնկածալում:

- Բադիկները կռնչում՝ ղա՛-ղա՛-ղա՛:

Բադի նման երերալով դոփել աջ, ձախ, աջ ոտքերով:

- Ծիտիկը ծլվլում է՝ ծի՛վ-ծի՛վ-ծի՛վ:

Ձեռքով ցույց տալ թռչունների կտուցը՝ ձեռքերը կրծքավանդակի մոտ պահած, բութ մատը ներքևում, իսկ 4 մատը վերևում 3 անգամ իրար միացնելով:

- Ճանապարհին թռչկոտում՝ թը՛ռ-թը՛ռ-թը՛ռ:

3 անգամ ցատկել տեղում:

Ուսուցիչ. «Սիրելի՛ փոքրիկներ, ավարտեցինք մեր խաղը»:

Ձեռքերը բռնած՝ պտտվել ժամասլաքի ուղղությամբ, վերջում կանգնել դեմքով դեպի շրջանը և ձեռքերը բաց թողնել:

Շարժում երը կատարել կենդանիների կամ թռչունների ձայներով երգելիս (այդ ձայները հնչեցվում են 3 անգամ, յուրաքանչյուր շարժում նույնպես կատարվում է 3 անգամ):

Հայկական ժողովրդական **«Կիրակմուտ իրիկունը»**[39] երգը գրված է մենակատարի և խմբի համար: Մեղեդին այնպես է հնչում, ասես խմբի երգեցողությունը մենակատարի արձագանքը լինի: Այսպիսով մենակատարի և խմբի տեմբրները հակադրվում են միմյանց:

Խոսելով երաժշտական նվագարանների հնչերանգի մասին՝ ունկնդրում ենք ռուս կոմպոզիտոր Անատոլի Լյադովի «Երաժշտական զարդատուփը» նախ դաշնամուրի[40], ապա՝ մանկական նվագարանների[41] կատարմամբ: Դաշնամուրի երգային տեմբրը միանգամայն տարբերվում է մանկական նվագարանների զրնգուն ձայներանգից: Սկզբնաղբյուրում կոմպոզիտորը տալիս է հետևյալ անվանումը՝ «Музыкальная табакерка», որը բառացիորեն թարգմանվում է «Երաժշտական ծխախոտատուփ», բայց քանի որ դասագիրքը գրված է անչափահաս երեխաների համար, ծխախոտատուփը փոխարինվել է զարդատուփով, որում նույնպես երաժշտություն է հնչում, իսկ տիկնիկը պարում է:

Դասագրքում ներկայացվում են նաև կերպարվեստի գույները՝ ստեղծելով միևնույն նկարի երանգներ: Սովորում են Կարինե Վարդումյանի «Գույներ ենք մենք»[42] երգը:

Ֆրանսիացի կոմպոզիտոր Կամիլ Սեն-Սանսի «Կենդանիների պարահանդես» ստեղծագործության օրինակներով աշակերտները ծանոթանում են նվագարանների ձայնասահմանին՝ ռեգիստրին: Ստորին՝ թավ ռեգիստրը ներկայացվում է փղի կերպարով (ունկնդրում են «Փիղ» հատվածը[43]), իսկ վերինը՝ ջրի, որտեղ բազմաթիվ

---

[39] Կոմիտաս, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1979:

[40] https://www.youtube.com/watch?v=GLhaQjyUj30

[41] https://www.youtube.com/watch?v=EFd1Vy7AcJ0

[42] Վարդումյան Կ., Իմ մայր Հայաստան (մանկական երգեր), Երևան, հեղ. հրատ., 2009:

[43] https://www.youtube.com/watch?v=AAOwt65vKV4

կենդանիներ են լողում (ունկնդրում են «Ակվարիում հատվածը[44]):

Ունկնդրման ժամանակ կարևոր է երաժշտական արտահայտչական միջոցների և ստեղծագործության բովանդակության կապի բացահայտումը, այսինքն՝ թե ո՛ր արտահայտչամիջոցներով են բնութագրվում փիղը, ծովային կենդանիները, կենգուրուն, իշուկը: Ապա խաղի միջոցով ամրապնդում են հնչերանգի վերաբերյալ գիտելիքները: Ուսուցիչը ներկայացնում է «Կենդանիների պարակահանդեսից» ոչ միայն ծանոթ հատվածները, այլ նաև այն կենդանիներին բնութագրող մասերը, որոնք անծանոթ են սովորողներին: Ուսուցչի հուշող հարցերի օգնությամբ սովորողները պետք է կռահեն կենդանուն:

Երաժշտական արտահայտչամիջոցները՝ հնչերանգները, ներկայացնում ենք՝ աշակերտներին ծանոթացնելով ֆրանսիացի կոմպոզիտոր Կամիլ Սեն-Սանսին և նրա գրած «Կենդանիների պարահանդես» ստեղծագործությանը: Հեղինակը տարբեր նվագարանների հնչողությամբ նկարագրել է տարբեր կենդանիների: Երբ հնչում է երաժշտությունը, սովորողներն իրենց վառ երևակայությամբ պատկերացնում են փղի քայլերը, ծովի (որտեղ լողում են ձկներ և ջրային այլ կենդանիներ) ալիքների ձայնը, կենգուրուին[45], իշուկի ձայնը[46]: Յուրահատուկ ձևով ներկայացված է իշուկի զռռոցը: Ունկնդրումից հետո աշակերտները պատմում են, թե ինչպիսի հնչերանգ ուներ նշված կենդանիներին բնութագրող երաժշտությունը:

Արփինե Աղաբեկյանի «Ծիածանագույն խաղաղություն»երգով[47] սովորողներն ավարտում են 2-րդ դասարանը:

Այսպիսով՝ երաժշտական այբուբենին և երաժշտական արտահայտչամիջոցներին ծանոթացում ընդլայնում է աշակերտների մտահորիզոնն ու նրանց պատկերացում երը երաժշտության մասին:

---

[44] https://www.youtube.com/watch?v=v8irMn-pInk

[45] https://www.youtube.com/watch?v=jYdbkP6-9_w

[46] https://www.youtube.com/watch?v=1W4oT0MuP8E

[47] Աղաբեկյան Ա., Ուրախ նոտաներ, Երևան, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., 2022:

Երաժշտության ուսուցման մեթոդներ

Երաժշտամանկավարժական գործընթացի արդյունավետությունը մեծ մասամբ կախված է երաժշտության ուսուցման գործընթացում օգտագործվող մեթոդներից: «Մեթոդ» բառը (հունարեն՝ methodos բառից) նշանակում է հետազոտման, ուսուցման ուղի, եղանակ, միջոց և մեկնաբանվում է որպես բնության, հասարակության, մտածողության երևույթների և օրինաչափությունների ուսուցման կանոնների ու գործունեության ձևերի համակարգ:

Ուսուցման մեթոդների ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոններով՝ աշակերտի երաժշտական գործունեության արդյունավետ կազմակերպմամբ, դասընթացի ուսուցման նպատակով, ուսումնական նյութի յուրահատկությամբ, աշակերտների հնարավորություններով, դասավանդողի պատրաստվածությամբ և այլն:

Ուսուցման հետազոտական մեթոդները նպատակաուղղված են ճանաչողական խնդրի ստեղծագործական լուծմանը, որը սովորողն իրականացնում է ինքնուրույն: Այստեղ կարևոր են սովորողների մտագործունեությունն ու անձնային որակները՝ հաղորդակցումը, պատասխանատվությունը, համագործակցային կարողությունը, թիմային և անհատական աշխատանքի հմտությունները, աշխատասիրությունը, կազմակերպվածությունը և այլն: Ուսումնական հիմնախնդիրների լուծման որոնումներն իրականանում են իրական կյանքից վերցված իրավիճակների հիման վրա: Հետազոտական աշխատանքի ձևերն են նախագծերը, ստեղծագործական աշխատանքը, իրավիճակների մոդելավորումը և այլն:

Սովորողների մտածողության զարգացման միջոցներից է **«Խիկ» համակարգը:** «Խիկ» անվանումը երեք փուլերի անվանումների հապավումն է (խթանում, իմաստավորում, կշռադատում):

Առաջին փուլում (*խթանում*) պարզաբանվում է, թե սովորողները որքանով են պատրաստ նոր նյութի ընկալմանը: Այս փուլում բացահայտվում է աշակերտների ունեցած գիտելիքները՝ ուսուցանվող նոր թեմայի հետ կապված: Դա մտքի նախնական ակտիվացման միջոց է: Այդ աշխատանքները հանդիսանում են այն դրդապատճառը, որի շնորհիվ աշակերտները ձգտում են նոր գիտելիքներ ձեռք բերել: Այս փուլում կարելի է կիրառել «Վեննի դիագրամ», «Մտագրոհ», «Պրիզմա», «Ձնագնդի» կոչվող մեթոդները:

Երկրորդ փուլում (*իմաստավորում*) հաղորդվում է նոր նյութը, հիմնական գաղափարը: Այստեղ ուսուցիչը կիրառում է ուսուցման բազմապիսի մեթոդներ, հնարներ, որոնք կարողանում են պահպանել սովորողների ակտիվությունը, հետաքրքրությունը, ինքնավերահսկումը, նորի և անցածի շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը: Օգտագործվում են հետևյալ մեթոդները. «Հասկացությունների քարտեզագրում», «T-աձև աղյուսակ», «m-աձև աղյուսակ», «Վեննի դիագրամ», «Այցելություն պատկերասրահ» և այլն:

«Խիկ» համակարգի երրորդ փուլում (*կշռադատում*) սովորողները յուրացրած նոր գիտելիքները հանրագումարի են բերում՝ դրանք դարձնելով իրենց «սեփականությունը»: Այս փուլում կիրառվում են մեթոդներ, որոնք ակտիվացնում են սովորողների միտքը, ընկալումը, ինքնուրույն արտահայտվելու կարողությունը, նպաստում ստեղծագործական մտածողության զարգացմանը: Դրանք են՝ «Վեննի դիագրամ», «Հասկացությունների քարտեզագրում», «T-աձև աղյուսակ» և այլն:

«Խիկ» համակարգը հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի հետաքրքիր մատուցել ուսուցման նոր թեման:

«Վեննի դիագրամի» մեթոդը կառուցվում է երկու կամ ավելի շրջանագծերով, որոնք կենտրոնում հատման որոշակի մակերես ունեն:

Այս դիագրամը կարելի է օգտագործել ուսումնասիրվող թեման կամ կերպարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով:

Օրինակ՝ երգ և պար ժանրերի ծանոթացման ժամանակ ցույց են տրվում դրանց ընդհանրություններն ու տարբերություն-ները:



«Մտավոր գրոհի» մեթոդն արտահայտում է սովորողնե-րի մտքերը նոր թեմայի շուրջ: Օրինակ՝ «Երաժշտական արտա-հայտչամիջոցներ» թեման անցնելիս դասի ընթացքում (խթա-նման փուլում) կարելի է կիրառել այդ մեթոդը: Գրատախտակի կենտրոնում նկարում ենք շրջանակ և մեջը գրում թեման: Աշա-կերտներն այդ թեմայի մասին ինչ գիտեն, գրում են շրջանակի շուրջը:



Այսպիսով՝ երաժշտական արտահայտչամիջոցներով սովորողները տարբերակում են երաժշտական ստեղծագործությունները:

«Պրիզմա» մեթոդը սովորողներին հնարավորություն է տալիս անկաշկանդ մտորելու թեմայի շուրջ: Այդ մեթոդի նպատակն է ներկայացվող նյութի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտի եղած ասոցիատիվ կապերի վերհանում և արձանագրում:

«Պրիզմա» մեթոդը կիրառվում է դասի խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը: Մեթոդը ենթադրում է արագ կողմնորոշում, ուշադրության կենտրոնացում և մասնակիցների համաձայնեցված գործողություններ, օրինակ՝

Թեման՝



Անհատական և խմբային քննարկումների նման ձևը ապահովում է ակտիվությունը, աշխուժությունը, թարմացումը և այլն:

Т-աձև աղյուսակն օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչ է, որը կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով Т տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը:

Օրինակ՝ աշակերտները կարող են անդրադառնալ Т-աձև աղյուսակին, երբ բնութագրում են օպերայի կամ բալետի հերոսներին:

Գերդա	**Ձյունե թագուհի**
բարի	**չար**
գեղեցիկ	**տգեղ**
հարգալից	**դաժան**
եղբորը սիրող	**անսիրտ**

Т-աձև աղյուսակի օգտագործումն արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում:

m-աձև աղյուսակը ևս գծագրական դասակարգիչ է, կառուցվածքով նման է **Т**-աձև աղյուսակին, որը միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք (դրական, բացասական, չեզոք) արտահայտելու հարմար միջոց է: Սա երեք բաժնից կազմված աղյուսակ է, որտեղ գրանցվում են միևնույն թեմայի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումները, բերվում են տվյալներ և հիմնավորումներ:

Օրինակ՝ աշակերտները կարող են բնութագրել «Չարի վերջը» օպերայի հերոսներին՝ կկվին, աղվեսին և շանը՝ ընդգծելով բնավորության երեք գծեր:

Կկու	Աղվես	Շուն
վախկոտ միամիտ	**խորամանկ խաբեբա**	**քաջ խելացի**

m-աձև աղյուսակը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս: Այն կարող է գործածվել թե՛ անհատական աշխատանքի, թե՛ խմբային քննարկումների ժամանակ:

Թեմատիկ պլան 2-րդ դասարան		
Թեմա 1	**Երաժշտության պարզ և մատչելի ժանրերը** **Նպատակը՝** ծանոթություն երաժշտության պարզ ու մատչելի ժանրերին (քայլերգ, երգ և պար), դրանց տեսակներին՝ զինվորական, մանկական քայերգ, կատակերգ, ժողովրդական և պարահանդեսային պարեր: Տևողություն, ռիթմ, զարկեր, տակտ, տակտի գիծ, հնգագիծ, նոտա, լիգա հասկացություններ: Երգի ուսուցում՝ «Հայոց այբուբեն» (խոսք և երաժշտ.՝ Կ. Վարդումյանի):	**8ժ.**
	Քայլերգ. Քայլերգի տեսակներ՝ զինվորական և մանկական: Երգի ուսուցում՝«Զինվոր» (խոսք և երաժշտ.՝ Մ. Սարգսյան-Չինկեզյանի): Յոհան Շտրաուս-Հոր ստեղծագործական դիմանկարը: Ունկնդրում՝ Յ. Շտրաուս-Հայր, «Ռադեցկու քայլերգը», Պ. Չայկովսկի, «Անագե զինվորիկների քայլերգը» «Մարդուկ-Ջարդուկ» բալետից: Երգի ուսուցում՝ հայկական ժողովրդական երգ «Փայտե ձիուկ»: Ունկնդրում՝ Կ. Սեն-Սանս, «Առյուծի քայլերգը» «Կենդանիների պարահանդեսից», Է. Փաշինյան, «Հեծյալը»: Ռիթմական վարժություն՝ «Հեծյալը» (երաժշտ.՝ Է. Փաշինյանի):	**2ժ.** **1ժ.** **1ժ.**
	Երգ Երգի տեսակներ՝ կատակերգ: Երգի ուսուցում՝ «Ով շատ խոսի» (խոսք՝ ժո-	**3ժ.** **1ժ.**

	ղովրդական, երաժշտ.՝ Գ. Մելիքսեթյանի): Գեղունի Չթչյանի ստեղծագործական դիմանկարը: Երգի ուսուցում՝ «Մեր երգն առաջին» (խոսք՝ Ս. Մուրադյանի երաժշտ.՝ Գ. Չթչյանի): «Մեր երգն առաջին» երգի հիման վրա նոտա, ռիթմ, տակտ հասկացությունների բացատրություն: Կոմիտասի ստեղծագործական դիմանկարը: Երգի ուսուցում՝ հայկական ժողովրդական երգ «Հինգ էծ ունեմ»: Նոտաների ուսուցում՝ 1-ին օկտավի մի, ֆա, սոլ նոտաները: Նոտագրություն՝ հայկական ժողովրդական «Հինգ էծ ունեմ» երգ:	**1ժ.** **1ժ.**
	Պար Ժողովրդական պարեր՝ պարերգ և մենապար: Երգի ուսուցում՝ հայկական ժողովրդական երգ «Մանրիկ տերևիկ ծաղիկ»: Ունկնդրում՝ «Շուշիկի» (մշակումը՝ Կոմիտասի): Պարահանդեսային պարեր՝ վալս: Յոհան Շտրաուս-Որդու ստեղծագործական դիմանկարը: Շտրաուս-Որդի, Վալս «Երկնագույն Դանուբի վրա»: Դիտում՝ «Երկնագույն Դանուբ» մուլտֆիլմը: «Երաժշտության պարզ և մատչելի տեսակները» թեմայի ամփոփում:	**3ժ.** **1ժ.** **1ժ.** **1ժ.**
Վերջնադրույթներ **Աշա-**	➢ երաժշտության պարզ և մատչելի տե-	

կերտներն իմանում են **կարողա-նում են** **տիրապե-տում են**	սակները՝ երգը, պարը և քայլերգը, դրանց տարատեսակները, ➢ տևողություն, ռիթմ, տակտ, հնգագիծ, նոտա, լիգա հասկացությունները: ➢ կատարել և ներկայացնել երաժշտական մանրանվագներ, մեկնաբանել, հաղոր-դել, փոխանցել իմաստը, հիմնական գաղափարը, ➢ ստեղծել ռիթմական նվագակցություն, ռիթմական շարժումներ, ➢ տարբերել երգի, պարի և քայլերգի տե-սակները: ➢ երաժշտության պարզ և մատչելի ժան-րերին, որոնք տանում են դեպի բարդ ժանրեր, ➢ երաժշտական գրագիտությանը (գրել նոտաներ, երաժշտական նշաններ), ➢ հայ և այլազգի կոմպոզիտորների կեն-սագրությանը:	
Ենթաթե-մա 1	***Ուր են տանում երաժշտության պարզ և մատչելի ժանրերը*** **Նպատակը**՝ երեխաներին բացատրել, որ երաժշտության պարզ և մատչելի ժանրերը տանում են դեպի բարդ ժանրեր. օպերա, բալետ և սիմֆոնիա:	***7ժ.***
	Օպերա Ազատ Մանուկյանի ստեղծագործական դիմանկարը: Ա. Մանուկյանի «Չարի վերջը» օպերան՝ ըստ Հովհաննես Թումանյանի համանուն հեքիաթ-առակի»: Երգի ուսուցում՝ «Թռչունների երգը» Ա. Մանուկյանի «Չարի վերջը» օպերայից:	**2ժ.**

	Բալետ Տիգրան Մանսուրյանի ստեղծագործական դիմանկարը: Տ. Մանսուրյան, «Ձյունե թագուհին» բալետն ըստ Հանս Քրիստիան Անդերսենի համանուն հեքիաթի»: Ունկնդրում՝ «Սառցե թագավորություն», Տ. Մանսուրյանի «Ձյունե թագուհին» բալետից: Նոտաների ուսուցում՝ 1-ին օկտավի դո, ռե: Ունկնդրում՝ «Մենուետ» Տ. Մանսուրյանի «Ձյունե թագուհին» բալետից:	**2ժ.**
	Սիմֆոնիա Յոզեֆ Հայդնի ստեղծագործական դիմանկարը: Ունկնդրում՝ հատված Յ. Հայդնի Օքսֆորդյան սիմֆոնիայից: Խաղ՝ «Շրջան»: Դիտել «Հայդնի «Մանկական սիմֆոնիա» մուլտֆիլմը: Նոտագրություն՝ հայկական ժողովրդական երգ «Դան, դան, դանեդան»: Ունկնդրում՝ հատված Յ. Հայդնի «Մանկական սիմֆոնիայից»: Երգի ուսուցում՝ «Հա՛ֆ, հա՛ֆ», Ա. Մանուկյանի «Չարի վերջը» օպերայից: Երգի ուսուցում՝ «Ձյուն է, ձյուն» (խոսք և երաժշտ.՝ Մ. Սարգսյան-Չինկեզյանի): «Ուր են տանում երաժշտության պարզ և մատչելի ժանրերը» ենթաթեմայի ամփոփում:	**3ժ.** **1ժ.** **1ժ.** **1ժ.**
Վերջնադրույթներ **Աշա-**	➢ Երգը տանում է օպերա, պարը՝ բալետ,	

կերտներն իմանում են **կարողանում են** **տիրապետում են**	քայլերգը՝ սիմֆոնիա, ➢ մանկական օպերայի, բալետի, սիմֆոնիայի և դրանց հեղինակների մասին: ➢ մեկնաբանել երաժշտական բարդ ժանրերի՝ օպերայի, բալետի և սիմֆոնիայի առանձնահատկությունները, ➢ մեկնաբանել և ներկայացնել մանկական օպերայի կերպարներ: ➢ օպերայից, բալետից, սիմֆոնիայից հատվածներ վերլուծելու կարողությանը, ➢ դո-ից սոլ նոտաների գրառմանը:	

Թեմա 2	**Ինչպես է ստեղծվում երաժշտությունը**	**8ժ.**
Ենթաթեմա 1	***Երաժշտական այբուբեն*** **Նպատակը**՝ երեխաներին սովորեցնել, որ ինչպես մայրենի լեզուն ունի իր այբուբենը, այնպես էլ երաժշտությունն ունի իր այբուբենը: Ծանոթություն մեղեդի, չափ, պաուզա հասկացություններին:	***5ժ.***
	Ունկնդրում՝ «Այբ, բեն, գիմ» (խոսք և երաժշտ.՝ Մ. Յորգանցի): Ունկնդրում «Երաժշտական այբուբեն» (խոսք՝ Ն. Միքայելյանի, երաժշտ.՝ Ա. Լուսինյանի): Երգի ուսուցում՝ «Հնչյունաշար» (խոսք և երաժշտ.՝ Հր. Օհանյանի): Նոտագրություն՝ դո հնչյունաշար, ձեռքի նշաններով կատարում: Ռոբերտ Պետրոսյանի ստեղծագործական դիմանկարը: Ունկնդրում՝ հայկական ժողովրդական երգ «Հացթուխ»: Երգի ուսուցում՝ «Իմ ձին» խոսք՝ Գ. Բորյա-	**2ժ.** **2ժ.**

	նի, երաժշտ.՝ Ռ. Պետրոսյանի: Պյոտր Չայկովսկու ստեղծագործական դիմանկարը: Ունկնդրում՝ «Ապրիլ (Ձնծաղիկ)» Պ. Չայկովսկու «Տարվա եղանակներ» շարքից: Երգի ուսուցում՝ հայկական ժողովրդական երգ «Ա՛խ, գարո՛ւն է, գարո՛ւն է»: Ունկնդրում՝ «Մայրիկը, գիրքը և հայրենիքը» (խոսք՝ Ս. Մուրադյանի, երաժշտ.՝ Մ. Վարդազարյանի): Երգի ուսուցում՝ «Ուրախ մայրիկ» (խոսք և երաժշտ.՝ Կ. Վարդումյանի): «Երաժշտական այբուբեն» ենթաթեմայի ամփոփում:	**1ժ.**
	Հեքիաթ Երաժշտություն թագուհու մասին Նոտաներով և ձեռքի նշաններով կատարում՝ հայկական ժողովրդական երգ «Արև, արև», «Կա՛թ-կա՛թ» (խոսք և երաժշտ.՝ Ա. Գևորգյանի), հայկական ժողովրդական երգ «Նանիկ», «Ձանգակներ» երգի կրկներգը (խոսք և երաժշտ.՝ Ջ. Լորդ Փիերպոնտի), «Ձինվոր» երգի առաջին տունը (խոսք և երաժշտ.՝ Մ. Սարգսյան-Չինկեզյանի): Ունկնդրում՝ «Ծաղրածուն և ծաղրաձուն» (խոսք՝ Յ. Սահակյանի, երաժշտ.՝ Ս. Բաբաթորոսյանի): Երգի ուսուցում՝«Դո-ռե-մի» («Երաժշտության հնչյուններ» մյուզիքլից), հայերեն տեքստը՝ Ա. Գևորգյանի, երաժշտ.՝ Ռ. Ռոջերսի: Ունկնդրում՝ «Վաչեի ձին» (խոսք՝ Էդ. Ավագյանի, երաժշտ.՝ Ս. Նաղդյանի): Նոտագրություն երաժշտական դադարի վերաբերյալ:	**3ժ.** **1ժ.** **1ժ.** **1ժ.**

	«Ինչպես է ստեղծվում երաժշտությունը» թեմայի ամփոփում	
Վերջնա-դրույթներ **Աշա-կերտներն իմանում են** **կարողա-նում են** **տիրապե-տում են**	➢ Երաժշտական այբուբենը, դո հնչյունա-շարը, սովորում են ձեռքի նշանները, ➢ Երաժշտություն թագուհու հեքիաթի մի-ջոցով սովորում են, որ երգերն արտա-հայտում են որոշակի տրամադրություն, ➢ մեղեդի, չափ, պաուզա հասկացություն-ները: ➢ երգերը կատարել համապատասխան տրամադրությամբ, ➢ երգել և նոտագրել դո հնչյունաշարը, ➢ ձեռքով չափ տալ 2/4 չափում, ➢ երաժշտության մեջ «լսել» երաժշտական դադարը՝ պաուզան: ➢ երաժշտական այբուբենին, դո հնչյունա-շարին, ➢ ձեռքի նշաններով երգելու կարողությա-նը:	
Ենթաթե-մա 2	***Երաժշտական արտահայտչամիջոցներ*** **Նպատակը**՝ ծանոթացնել երաժշտական արտահայտչամիջոցներին՝ տեմպ, դինամի-կա, երաժշտության կատարման ձևեր, տեմբր, ռեգիստր:	***9ժ.***
	Տեմպ, դինամիկա, **երաժշտության կատարման ձևեր** Վոլֆգանգ Ամադեուս-Մոցարտի ստեղծա-գործական դիմանկարը: Ունկնդրում՝ Վ.Ա. Մոցարտ, «Օրորոցային»՝ սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ:	**4ժ.** **1ժ.** **1ժ.**

	Երգի ուսուցում՝ «Միշտ առույգ» խոսք՝ Լ. Սարգսյանի, երաժշտ.՝ Է. Միհրանյանի: Ռիթմական վարժություն՝ «Ծաղիկների պար»՝ «Մենուետ» Վ.Ա. Մոցարտի «Դոն Ժուան» օպերայից: Ռիթմական վարժություն՝ Ա. Խաչատրյան «Ցատկապարան»: Ունկնդրում՝ «Պիցցիկատո» Լ. Դելիբի «Սիլվիա» բալետից: Երգի ուսուցում՝ «Օրորոցային» (խոսք՝ Լ. Միրիջանյանի, երաժշտ.՝ Յ. Բրամսի):	 **2ժ.**
	Տեմբր, ռեգիստր	**5ժ.**
	Երգի ուսուցում՝ «Փոքրիկներ» հայերեն տեքստը՝ Ա. Գևորգյանի, երաժշտ.՝ էստոնական ժողովրդական: Երգի ուսուցում՝ հայկական ժողովրդական երգ «Կիրակմուտ իրիկունը»: Ունկնդրում՝ Ա. Լյադով, «Երաժշտական զարդատուփ» դաշնամուրով, ապա՝ մանկական նվագարաններով: Երգի ուսուցում՝ «Գույներն ենք մենք» խոսք՝ Հ. Աբրահամյանի, երաժշտ.՝ Կ. Վարդումյանի: Ունկնդրում՝ «Փիղը», «Ակվարիում» Կ. Սեն–Սանսի «Կենդանիների պարահանդես» ստեղծագործությունից: Կամիլ Սեն-Սանսի ստեղծագործական դիմանկարը: Ունկնդրում՝ «Կենգուրու», «Երկարականջ կերպարներ» Կ. Սեն-Սանսի «Կենդանիների պարահանդես» ստեղծագործությունից: Երգի ուսուցում՝ «Ծիածանագույն խաղաղություն» խոսք և երաժշտ.՝ Ա. Աղաբեկյանի:	**2ժ.** **2ժ.** **1ժ.**

	«Երաժշտական արտահայտչամիջոցներ» ենթաթեմայի ամփոփում:	
Վերջնա-դրույթներ **Աշա-կերտներն իմանում են** **կարողա-նում են** **տիրապե-տում են**	➢ Երաժշտական արտահայտչական մի-ջոցները՝ երաժշտության ընթացք, դինա-միկա, երաժշտության կատարման ձևեր, տեմբր, ռեգիստր: ➢ վերլուծել ստեղծագործությունը՝ հիմնը-վելով երաժշտական արտահայտչամի-ջոցների վրա, ➢ ստեղծել կերպարներ, ռիթմական նվա-գակցություն, ռիթմական շարժումներ: ➢ երաժշտության արտահայտչամիջոցների վերաբերյալ գիտելիքների, ➢ այնպիսի ստեղծագործությունների մեկ-նաբանման կարողությանը, որոնցում ցայտուն կերպով արտահայտված են երաժշտական արտահայտչական միջոց-ները:	

Օրինակելի դասի պլան 1

Ամիս, ամսաթիվ _____ **Դասի տևողությունը՝** 45 րոպե

Առարկա՝ Երաժշտություն **Դասարան՝** 2-րդ

Ուսուցչի անունը, ազգանունը՝ _____

Դասի տիպը՝ ինտեգրված

Հանձնարարված դասի թեման՝ Երգ

Հանձնարարությունների հարցում և գնահատում՝ «Հինգ էծ ունեմ», հնգագիծ, սոլի բանալի, տակտ, մի-ֆա-սոլ նոտաներ:

Նոր դասի թեման՝ Պար

Նպատակը՝ սովորողներին ծանոթացնել երաժշտության պարզ տեսակներից պարին և հայկական ժողովրդական պարերին:

Խնդիրները՝ պատմել պարի մասին, ծանոթացնել հայկական ժողովրդական պարերգին, Կոմիտասի մշակմամբ ժողովրդական «Շուշիկի» մենապարին:

Դաստիարակչական տարրեր՝ սեր ազգային երաժշտության նկատմամբ, հայրենասիրություն՝ ազգային երաժշտության միջոցով:

Մեթոդական տարրեր՝ խոսքային, բացատրական-ցուցադրական:

Միջառարկայական կապ՝ մարմնակրթություն:
Դասի ընթացքը՝ նախորդ թեմայի ամրապնդում:

Խթանում՝ հարցերի միջոցով պարզել, թե սովորողները ինչ գիտեն պարի մասին:

Իմաստի ընկալում՝ ներկայացնել պար թեման, հայկական ժողովրդական պարերգը և մենապարը (երգի ուսուցում՝ «Մանրիկ տերևիկ ծաղիկ» պարերգ, պարերգին բնորոշ շարժումներով կատարում, դափով նվագակցություն, Կոմիտասի մշակմամբ «Շուշիկի» մենապարի ունկնդրում):

Կշռադատում՝ ինտերակտիվ քննարկմամբ ամփոփել դասի թեման.



Տնային հանձնարարություն՝ ուշադիր լսել շրջապատում հնչող երաժշտությունը՝ ուշադրություն դարձնելով պարերին և հաջորդ դասին ներկայացնել:

Կատարող _____ **Ստորագրող**_____

Օրինակելի դասի պլան 2

Ամիս, ամսաթիվ _____ **Դասի տևողությունը**՝45 րոպե

Առարկա՝ Երաժշտություն **Դասարան՝** 2-րդ

Ուսուցչի անունը, ազգանունը_____

Դասի տիպը՝ ինտեգրված

Հանձնարարված դասի թեման՝ Պար _____

Հանձնարարությունների հարցում և գնահատում պարը որպես երաժշտության մատչելի ժանր, «Մանրիկ տերևիկ» պարերգ, «Շուշիկի» մենապար:

Նոր դասի թեման՝ Պար _____

Նպատակը՝ սովորողներին ծանոթացնել պարահանդեսային վալս պարին:

Խնդիրները՝պատմել վալսի մասին, ծանոթացնել Յոհան Շտրաուս-Որդու ստեղծագործական դիմանկարին, դիտել մուլտֆիլմ:

Դաստիարակչական տարրեր՝հարգանք և հետաքրքրություն սերմանել պարահանդեսային պարերի նկարմամբ, ձևավորել միջմշակութային հաղորդակցման տարրեր:

Մեթոդական տարրեր՝ խոսքային, բացատրական-ցուցադրական:

Միջառարկայական կապ՝ մարմնակրթություն:

Դասի ընթացքը՝ նախորդ թեմայի հարցում:
Խթանում՝ հարցերի միջոցով պարզել, թե սովորողները ինչ գիտեն այլ ժողովուրդների պարերի մասին:

Իմաստի ընկալում՝ ներկայացնել պարահանդեսային վալս պարը, ծանոթություն Յոհան Շտրաուս-Որդու կենսագրությանը, «Երկնագույն Դանուբի_վրա» վալսի ունկնդրում, վալսի երաժշտության հիման վրա նկարված մուլտֆիլմի դիտում):

Կշռադատում՝ _ինտերակտիվ քննարկմամբ ամփոփել դասի թեման.



Տնային հանձնարարություն՝ ուշադիր լսել շրջապատում հնչող երաժշտությունը՝ առանձնացնելով այլ ժողովուրդների պարեղանակները և հաջորդ դասին ներկայացնել:

Կատարող _____ **Ստորագրող**_____

Գնահատման համակարգ

Երաժշտության ուսուցման և դասավանդման գործընթացում գնահատումը առաջարկվում է կատարել ըստ գործունեության տեսակների, ապա միջինացնել՝ ձևավորելով ամփոփիչ գնահատականը:

Հիմնվելով ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.17-րդ կետում ներկայացված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների», հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ միավորային գնահատման բնութագրիչների վրա (պաշտոնական հրապարակման օրը՝ 28.02.2023թ), ինչպես նաև «ԿԶՆԱԿ»-ի և «ԿՏԱԿ»-ի համատեղ մշակված ձևավորող գնահատման սկզբունքների վրա, առաջարկում ենք հանրակրթական դպրոցի «Երաժշտություն» առարկայի դասերին կիրառել գնահատման հետևյալ բազմագործոն համակարգն՝ ըստ երաժշտական գործունեության տեսակների:

Գնահատման համար ուսուցիչը, կամ դպրոցի տնօրինությունը կարող է ընտրել ներկայացված միավորային, բառային կամ գունային ձևը, ըստ ցանկության (այդ մասին տե՛ս օրենքում):

	Երգեցողություն	Երաժշտության ունկնդրում	Երաժշտառիթմական և պարային շարժում	Նվագ՝ մանկական նվագարան-ներով	Երաժշտա-տեսական և երաժշտա-պատմական գիտելիքներ	Ստեղծագործում
10 միավոր. բացառիկ. կարմիր:	Կատարում է բացառիկ մաքուր, ճշգրիտ, արտահայտիչ:	Բացառիկ ճշգրտորեն, գիտակցված է մեկնաբանում ժանրը, արտահայտ-չամիջոցները:	Կատարում է մետրառիթմական առանձնահատ-կությունների ճշգրիտ ըմբռնմամբ, երաժշտությանը համահունչ:	Ուղեկցու-թյունն իրա-կանացնում է բացառիկ ճշգրիտ, առաջադ-րանքին համապա-տասխան:	Ճիշտ և ըմբռնումով լիարժեք մեկնաբանում է տեսական հասկացու-թյունները, կարողանում է դրանք գործնականում կիրառել: Կոմպոզի-տորների ստեղծագործական դիմանկարները ներկայացնելիս հիմնվում է իրեն արդեն ծանոթ փաստերի վրա:	Ստեղծում է երգեր /խոսքեր, մեղեդի/ առաջադրված հանձնարարությանը համապատասխան՝ պահպանելով հանգավորումը և երգի տողերի համամասնու-թյունը:
9 միավոր. փայլուն. նարնջագույն:	Կատարում է մաքուր, գրեթե անսխալ, արտահայտիչ:	Աննշան սխալներով, ըմբռնումով, հիմնականում ճիշտ է մեկնաբանում ժանրը և արտահայտ-չամիջոցները:	Կատարում է գրեթե անսխալ՝ երկի մետրառիթմական առանձնահատկու-թյունների ճիշտ ընկալմամբ:	Ուղեկցու-թյունն իրականաց-նում է հիա-նալի, ճշգրիտ, ըմբռնումով, առաջադրան-քին համա-պատասխան:	Ճիշտ և ըմբռնումով մեկնաբանում է տեսական հասկացու-թյունները, գործնականում կարողանում է դրանք կիրառել: Կոմպոզիտորների ստեղծագործական դիմանկարները կարողանում է ճշգրիտ և համոզիչ ներկայացնել:	Ստեղծում է երգեր /խոսքեր, մեղեդի/ առաջադրված հանձնա-րարությանը համապա-տասխան՝ պահպանելով հանգավորումը, բայց երգի տողերի հա-մամասնության որոշ խախտումով:

8 միավոր. հիանալի. դեղին:	Կատարում է մաքուր, աննշան անճշտություն ներով, արտահայտիչ:	Գրեթե անսխալ, հիմնականում ճիշտ է մեկնաբանում ժանրը և արտահայտ-չամիջոցները:	Կատարում է աննշան սխալներով՝ երկի մետրառիթմական առանձնահատկու-թյունների ճիշտ ընկալմամբ:	Ուղեկցու-թյունն իրա-կանացնում է խորն ըմբռնու-մով, ճշգրիտ, առաջադրան-քին համա-պատասխան:	Ճիշտ և ըմբռնումով մեկնաբանում է տեսական հասկացու-թյունները, գործնականում գրեթե անսխալ կարողանում է դրանք կիրառել: Կոմպոզիտորների ստեղծագործական դիմանկարները ներկայացնում է համոզիչ մեկնա-բանությամբ:	Ստեղծում է երգեր /խոսքեր, մեղեդի/ առաջադրված հանձնարարությանը համապատասխան՝ չպահպանելով հանգավորումը և երգի տողերի համամասնու-թյունը:
7 միավոր. գերազանց. կանաչ:	Կատարում է մաքուր, արտահայտիչ, բայց որոշ անճշտություն ներով:	Որոշ անճշտ-տություններով է մեկնաբանում ժանրը և արտա-հայտչամի-ջոցները:	Կատարում է հիմնականում անսխալ՝ երկի մետրառիթմական առանձնահատ-կությունների ճիշտ ընկալմամբ:	Ուղեկցու-թյունն իրականաց-նում է ճշգրիտ, երաժշտությու-նը զգալով, առաջադրան-քին համա-պատասխան:	Ճիշտ և ըմբռնումով մեկնաբանում է տեսական հասկացու-թյունները, գործնականում կարո-ղանում է հիմ-նականում անսխալ կիրառել: Կոմպոզի-տորների ստեղծագործական դիմանկարները ներկայացնում է գերազանց:	Դժվարությամբ է ստեղծում երգեր /խոսքեր, մեղեդի/ առաջադրված հանձնարարությանը համապատասխան՝ չի պահպանում հանգա-վորումը և երգի տողերի համամասնությունը:
6 միավոր. կեցցես. երկնագույն:	Կատարում է հնարավորինս մաքուր, որոշ անճշտություն-ներով, բայց պակաս արտահայտիչ:	Ճիշտ է մեկնաբանում ժանրը և արտահայտ-չամիջոցները՝ թույլ տալով որոշ սխալներ:	Կատարում է ոչ զգալի սխալներով՝ երկի մետրա-ռիթմական առանձնա-հատկությունների հիմնականում ճիշտ ընկալմամբ:	Ուղեկցու-թյունն իրականաց-նում է ճիշտ զգալով երաժշտությու-նը, առաջադ-րանքին համա-	Ճիշտ և ըմբռնումով մեկնաբանում է տեսական հասկացու-թյունները, գործնականում կարո-ղանում է քիչ սխալներով կիրառել: Կոմպոզիտորների	Դժվարանում է ստեղծել երգեր /խոսքեր, մեղեդի/ առաջադրված հանձնարարությանը համապատասխան:

				պատասխան:	ստեղծագործական գործունեությունը մեկնաբանում է ճիշտ:	
5 միավոր. ապրես. կապույտ:	Կատարում է ոչ այնքան մաքուր, անճշտություն-ներով, միօրինակ:	Ոչ լիարժեք և ոչ ճիշտ է մեկնաբանում ժանրը, արտահայտ-չամիջոցները, թեպետ ըմբռնել է ստեղծագոր-ծության բովանդակու-թյունը:	Կատարում է որոշ սխալներով, բայց երկի տրամադրու-թյան ճիշտ ընկալմամբ և փոխանցմամբ:	Ուղեկցու-թյունն իրականաց-նում է հիմնականում ճշգրիտ, առաջադրան-քին համա-պատասխան:	Ճիշտ և գրեթե անսխալ մեկնաբանում է տեսական հասկացու-թյունները, կոմպոզիտորների ստեղծագործական ուղին մեկնաբանում է հիմնականում ճիշտ:	Դժվարանում է ստեղծել երգեր /խոսքեր, մեղեդի/ առաջադրված հանձնարարությանը համապատասխան:
4 միավոր. շատ լավ. մանուշակագույն	Կատարում է սխալներով, միօրինակ, առանց զգացմունքների:	Ճիշտ չի մեկնաբանում ժանրը և արտահայտ-չամիջոցները, թեպետ հիմ-նականում ըմբռնել է ստեղծագոր-ծության բովանդակու-թյունը:	Կատարում է սխալներով, բայց երկի տրամադրու-թյան ճիշտ ընկալմամբ:	Ուղեկցու-թյունն իրականաց-նում է սխալներով՝ խախտելով առաջադրաքի պահանջները:	Սխալներով մեկնաբանում է տեսական հասկացու-թյունները, գործնականում կիրա-ռում է սխալներով: Կոմպոզիտորների ստեղծագործական դիմանկարները ներ-կայացնում է ոչ լիարժեք:	Դժվարանում է ստեղծել երգեր /խոսքեր, մեղեդի/ առաջադրված հանձնարարությանը համապատասխան:
3 միավոր. լավ. վարդագույն:	Կատարում է զգալի սխալներով, միօրինակ, առանց զգացմունքային մեկնա-բանության:	Չի կարողանում ճիշտ մեկնաբանել ժանրը և արտահայտ-չամիջոցները, որովհետև ուշադիր չի եղել	Կատարում է զգալի սխալներով, բայց երկի տրամադրու-թյան որոշ ճիշտ ընկալմամբ:	Ուղեկցու-թյունն իրականաց-նում է զգալի սխալներով:	Հիշողությամբ վերարտադրում է երաժշտատեսական հարցերի գրեթե կեսը, դրանք գործ-նականում դժվարանում է կիրառել:	Դժվարանում է ստեղծել երգեր /խոսքեր, մեղեդի/ առաջադրված հանձնարարությանը համապատասխան:

		մեկնա-բանությունների ժամանակ:			Կոմպոզիտորների ստեղծագործական դիմանկարները ներկայացում է առանց երեվույթների մեջ խորանալու:	
2 միավոր. պակաս լավ. շագանակագույն:	Կատարում է զգալի սխալներով, միօրինակ, առանց զգացմունքների, առանց տրամադրության փոխանցման:	Ճիշտ չի մեկնաբանում ժանրը և արտահայտչամիջոցները, քանի որ պակաս ուշադրությամբ է լսել բացատրությունները:	Կատարում է զգալի սխալներով, երաժշտական երկի տրամադրությունը չզգալով:	Ուղեկցությունն իրականացնում է զգալի սխալներով, երաժշտությանն աններդաշնակ:	Հիշողությամբ վերարտադրում է երաժշտատեսական թեմաների որոշ հարցեր, գործնականում դժվարությամբ է կիրառում: Կոմպոզիտորների ստեղծագործական դիմանկարները ներկայացում է մակերեսորեն:	Ստեղծագործական աշխանքներում պասիվ է:
1 միավոր. բավարար. մոխրագույն:	Կատարում է գրեթե շշնջալով, անլսելի, առանց իմաստի հաղորդման:	Անուշադիր է եղել ունկնդրման ժամանակ և չի հասկացել ստեղծագործության բովանդակությունը:	Կատարում է սխալներով, երաժշտությանը ոչ համահունչ:	Ուղեկցությունն իրականացնում է զգալի սխալներով, որոնք խաթարում են երաժշտության ընթացքը:	Ճանաչում է երաժշտատեսական նյութի որոշ պարզ հասկացություններ, բայց չի կարողանում բացատրել և գործնականում կիրառել: Կոմպոզիտորների ստեղծագործական գործունեության մասին մասին ունի մոտավոր պատկերացումներ:	Ստեղծագործական աշխանքներում պասիվ է և խուսափում է մասնակցությունից:

Զինվոր

Խոսք և երաժշտ.՝
Մարի Սարգսյան-Չինկեզյան





Հայաստան երկրի,
Հայ ժողովրդի
Ու վաղվա կյանքի
Պաշտպանն ես դու:

Կրկներգ

Մեր երգն առաջին

Խոսք՝ Ս. Մուրադյանի

Գ. Չթչյան



Երգի դասն այնպես
Ուրախ է անցնում,
Մեր այս նոր երգն է
Գեղեցիկ հնչում:

Կրկներգ

Ինչքան էլ երգեր
Կյանքում սովորենք,
Առաջին երգն այս
Մենք միշտ կհիշենք:

Կրկներգ

Թռչունների երգը

Խոսք՝ Հ. Թումանյանի

Ա. Մանուկյան



Արագ

Թռչունները

15

Ծիտ ենք, ծիտ ենք, ծըլ - վը - լում ենք ծիվ, ծիվ, ծիվ,

19

ոս - տոս-տում ենք, թըռչ - կո - տում ենք, տիվ, տիվ, տիվ:

23

Այ մեր թև - իկ, այ մեր փետ - րիկ մենք պիտ դառ-նանք փոք - րիկ ծի - տիկ;

27

Փոք - րիկ ծիտ եմ պի - ծի, - մի - ծիկ: Թըռռռ...

gliss.

Հաֆ, հաֆ

Խոսք՝ Հ. Թումանյանի

Ա. Մանուկյան




16
բայցթե մի գող, չարկա-մե-ցող ու-զի թա-քուն մըտ-նի մեր տուն... Հաֆ,
22
հաֆ, հաֆ, հաֆ, ա - հա այս - պես հա - չում եմ ես, հաֆ,
26
հաֆ, հաֆ, հաֆ, ա - հա այս - պես պա - հում եմ ես, հաֆ,
30
հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ:

Հնչյունաշար

Խոսք և երաժշտ.՝
Հր. Օհանյանի

Ուրախ, չափավոր

mf

5

Դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի, դո Հը՝ն – չյուն – ներ,

mf

9

Դո, սի, լա, սոլ, ֆա, մի ռե, դո Ջա – նիկ – ներ. Բար-ձրա-նում ենք

14

և իջ–նում ենք Ծար – քե – րով, Միշտ լը՝ց–նում եք իմ սիր–տը ձեր



Դո, ռե, մի ֆա, սոլ, լա, սի, դո,
Հնչյուններ,
Դո, սի, լա, սոլ, ֆա, մի, ռե, դո,
Ջանիկներ.
Երբ ձեզ հետ եմ, ես չեմ տխրում
Ոչ մի ժամ,
Ուրախ երգն է միշտ ինձանից
Անբաժան:

Լա, լա, լա, լա, լա, լա,
Լա, լա, լա, լա, լա, լա,

Իմ ձին

Խոսք՝ Գ. Բորյանի

Ռ. Պետրոսյան

Չափավոր

5

Ձի, ձի, փայ – տե ձի, Մեր դը – ռա – նը կա – պե – ցի,

9

Սի – ռուն սի – ռուն ներ – կե – ցի, Հե – տո նը – ման թամ – բե – ցի...

13

Ով որ ու – նի այս – պես ձի, Թող գա ինձ հետ նա մը – ցի:



Դո ռե մի

Հայերեն տեքստը՝ Ա. Գևորգյանի

Ռ. Ռոջերս



18

Սոլ, եր – կին – քը կա – պու – տակ,

23

Լա, ժըպ – տում է շա-դու-նակ, Սի, սա – ռե – ռիգա-գա-թին

30

Փայլ – փը – լում է սպի – տակ ձյու – նը կըր – կին:

35

Դո մի մի մի սոլ սոլ ռե ֆա ֆա լա սի սի:

39

Սոլ, դո, լա, ֆա, մի, դո, ռե,

46

սոլ, դո, լա, սի, դո, ռե,

53

դո: Դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի, դո, սոլ, դո:

Օրորոցային

Հայերեն տեքստը՝ Լ. Միրիջանյանի

Յ. Բրամս



Լուսինն իր շողերով
Քեզ քնքուշ կշոյի,
Ծովն անվերջ իր երգով
Քեզ խաղաղ կօրորի:
Ես օրոր կասեմ քեզ,
Որ շուտով դու քնես:

2 անգամ

Փոքրիկներ

Էստ. ժող. երգ
Մշ.՝ Տ. Պոլատենկոյի

Հայերեն տեքստը՝ Ա. Գևորգյանի





Ուսուցիչ.
Սիրելի՛ փոքրիկներ, շարունակում ենք խաղը:

Աշակերտներ.
Գորտերը կռկռում են՝ կը՛ռ–կը՛ռ–կը՛ռ,
Բադիկները՝ կռնչում՝ ղա՛–ղա՛–ղա՛,
Ծիտիկը ծլվլում է՝ ծի՛վ–ծի՛վ–ծի՛վ,
Ճանապարհին թռչկոտում՝ թը՛ռ–թը՛ռ–թը՛ռ:

Ուսուցիչ.
Սիրելի՛ փոքրիկներ, ավարտեցինք մեր խաղը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաբեկյան Ա., Ուրախ նոտաներ, Երևան, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., 2022:
2. Ամատունի Ս., Երաժշտական գրականություն VII, Երևան, 2008:
3. Արտուտիկ (մանկական երգեր), կազմող՝ Վ. Վարդանյան, Երևան, «Արևիկ» հրատ., 1988:
4. Բարսամյան Ա., Հարությունյան Մ., Հայ երաժշտության պատմություն, Երևան, «Նոր դպրոց» հրատ., 1996:
5. Բաղդասարյան Մ., Ռուս երաժշտության պատմություն (ուսումնա- կան ձեռնարկ), 2-րդ հրատ., Երևան, «Լուսակն» հրատ., 2022:
6. Բզեզը (մանկական երգեր դաշնամուրի նվագակցությամբ), Երևան, «Հայաստան» հրատ. 1974.
7. Բրուտյան Ա., Ռամկական մրմունջներ, Երևան, 1979:
8. Բրուտյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագոր- ծություն, Երևան, 4-րդ հրատ., 2014:
9. Բրուտյան Ց., Կոմիտաս, Երևան, «Հայաստան» հրատ., 1969:
10. Գալացկայա Վ., Արտասահմանյան երկրների երաժշտական գրականություն, թարգմ.՝ Ռ. Խաչատրյանի, հտ. 1, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2021:
11. Գալացկայա Վ., Արտասահմանյան երկրների երաժշտա- կան գրականություն, թարգմ.՝ Ռ. Խաչատրյանի, հտ. 3, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2021:
12. Գյոդակյան Գ., Էջեր հայ երաժշտության պատմությունից, Երևան, 2009:
13. Գևորգյան Ա., Երաժշտամանկավարժական տեխնոլոգիաներ (ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, «Արտագերս» հրատ., 2015:

14. Գևորգյան Ա., Ռիթմիկա (մեթոդական ձեռնարկ), Երևան, «Մեկնարկ» հրատ., 2022:
15. Գևորգյան Ա., Ռիթմիկա (մեթոդական ձեռնարկ), մաս II, Երևան, «Մեկնարկ» հրատ., 2022:
16. Դեմուրյան Ս., Հայ ժողովրդական երգեր և նվագներ, պրակ 9, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2013:
17. Մարկոսյան Հ., Եսայան Ռ., Երաժշտության աշխարհում. բալետ, Երևան, «Արևիկ» հրատ., 2007:
18. Երգե՛, բլբուլս (հայկական ժողովրդական մանկական երգեր), կազմող-խմբագիր՝ Ա. Փահլևանյան, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2019:
19. Թումաճան Մ., Հայրենի երգ ու բան, 4 հատորով. հ. 1, Երևան, ՀՀ ԳԱ հրատ. 1972. հ. 2, 1983. հ. 3, 1986. հ. 4, «Զանգակ» հրատ., 2005:
20. Լուսինյան Ա., Խաղ, երգ ու պարերի աշխարհ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 1996:
21. Լևիկ Բ., Արտասահմանյան երկրների երաժշտական գրակա-նություն, թարգմ.՝ Ռ. Խաչատրյանի, հտ. 2, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2021:
22. Կաքավիկ (մանկական երգերի ժողովածու), կազմող՝ Ա. Շահնազարյան, Երևան, «Մխիթար Սեբաստացի» կրթահա-մալիր, 2008:
23. Կոմիտաս, Երկերի լիակատար ժողովածու, հհ. 1-14, Երևան, 1960-2006:
24. Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրութիւններ և յօդուածներ, 2 գրքով, գիրք Բ, Երևան, «Սարգիս Խաչենց», «Փրինթ-ինֆո», 2007:
25. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն ուսումնական ձեռնարկ, կազմող Գ. Մելիքսեթյան, Երևան, հեղ. հրատ., 2022:
26. Մանուկյան Ա., Չարի վերջը (մանկական օպերա), Երևան, 1958:
27. Մանուկյան Մ., Ժողովրդական ավետիսներ, Մայր Աթոռ Ս.

Էջմիածին, 1995:
28. Մանուկյան Մ., Մարտունու շրջանի ժողովրդական երգեր, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1997:
29. Յուզբաշյան Յու., Ավետիսյան Վ. «Երաժշտություն» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2007.
30. Յուզբաշյան Յու., Փահլևանյան Ա., Երաժշտությունը 1-4-րդ դասարաններում (ուսուցչի մեթոդական ձեռնարկ), Երևան, «Մակմիլան Արմենիա» հրատ., 2011:
31. Յուզբաշյան Յու., Փահլևանյան Ա., Երաժշտություն (2-րդ դասարանի դասագիրք), Երևան, «Զանգակ» հրատ., 2021:
32. Մանկական երգարան. պարերգ. առաջին տասնյակ, գրառող, բանահյուսական-բանաստեղծական տեքստը մանկական տարիքի համար փոխադրող և կազմող՝ Արուսյակ Սահակյան, Երևան, «Նորք գրատուն» հրատ., 2003:
33. Պետրոսյան Ռ., Խմբերգերի ընտրանի (մանկական), գիրք երկրորդ, Երևան, «Ֆենոմեն» հրատ., 2009:
34. Պետրոսյան Ռ., Խմբերգեր, գիրք 1, Երևան, «Ֆենոմեն» հրատ., 2009. գիրք 2, 2011. գիրք 3, 2012:
35. Պետրոսյան Ռ., Խմբերգեր, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2015:
36. Սարաջյան Գ., Ումր-Շատ Վ., Դաշնամուրի ձեռնարկ. I և II մասեր: Խմբագիր՝ Գ. Բուդաղյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1973, 1978:
37. Սարգսյան-Չինկեզյան Մ., Փոքրիկ աշխարհ (երգարան), Երևան, «Անտարես» հրատ., 2020:
38. Սովետական Հայաստանի երաժշտությունը. հոդվածների ժողովածու, կազմող՝ Ա. Թադևոսյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1973:
39. Վարդումյան Կ., Իմ մայր Հայաստան (մանկական երգեր), Երևան, հեղ. հրատ., 2009:
40. Վարդումյան Կ., Գունդիրևներ Ն. և Օ., Երգերի, երաժշտական

խաղերի ընտրանի, Երևան, հեղ. հրատ., 2021:
41. Օհանյան Հ., Դպրոցական երգեր (դաշնամուրի նվագակցությամբ), Երևան, «Լույս» հրատ., 1975:
42. Абдуллин Э.Б., Николаева Е.В. Теория музыкального образования. Москва: Академия, 2004.
43. Геворкян А.М. Формирование слушательской компетенции бакалавров в процессе музыкально-педагогического образования: дисс. канд. пед. наук по ВАК РФ 13.00.02. – Тамбов: 2009.
44. Жак-Далькроз Э. Ритм. - Москва: Издательский дом «КЛАССИКА-XXI», 2010. - 248 с., ил.
45. Золотова И. Л., Детская музыка современных армянских композиторов, Ереван, изд «Мегапарт» 1 991.
46. Школяр Л.В. Музыкальное образование в школе: Учебное пособие для студ. муз. фак. и отд. высш. и сред. пед. учеб. заведений / Под. ред. Л.В. Школяр, В.А. Школяр, Е.Д. Критская и др. Москва: Академия, 2001.
47. Программы общеобразовательных учреждений. Музыка 1-8 классы / Под руководством Д.Б. Кабалевского; 4-е издание. Москва. Изд. Просвещение, 2007.
48. Orff, Carl. Ein Bericht in Wort und Bild, 2 Aufl. Mainz, 1960.
49. https://escs.am/am
50. https://komitasmuseum.am/
51. https://possum.ru/?p=14847
52. https://www.belcanto.ru/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....3

1-ին կիսամյակ, թեմա 1. Երաժշտության պարզ և մատչելի ժանրերը....4

1-ին կիսամյակ, ենթաթեմա 1 Ո՞ւր են մեզ տանում երաժշտության պարզ ու մատչելի ժանրերը.....15

2-րդ կիսամյակ, թեմա 1 Ինչպես է ստեղծվում երաժշտությունը (երաժշտական այբուբեն).....19

2-րդ կիսամյակ, ենթաթեմա 1. Երաժշտության արտահայտչամի-ջոցներ.....24

Երաժշտության ուսուցման մեթոդներ.....32

Թեմատիկ պլան.....38

Դասի օրինակելի պլան.....47

Գնահատման համակարգ.....51

Հավելված.....56

Օգտագործված գրականություն.....74